

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Իգոր ԲԱՂԻՐՅԱՆ

**ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ - 2002

# I. Համաշխարհային հասարակական-քաղաքական եւ տնտեսական միտումների համառոտ Նկարագիր

Ապագայի գիտակցված պլանավորումը պետականության կարևորագույն հատկանիշն է: Ավելին, այդ գործընթացի արդյունավետության մակարդակը հստակ համահարաբերակցվում է ազգային պետականության մակարդակի հետ:

Ներկայումս ապագայի պլանավորման համաշխարհային պրակտիկայի հիմքում ընկած է զարգացման համապարփակ, որոշումների ընդունման ինստիտուտներից անկախ, համաշխարհային գերակայությունների առկայության վերաբերյալ հայեցակարգային պատկերացումը:

Այդ համապարփակ միտումների ամբողջությունը՝ ապագայի ընդհանուր հիմնականախթն է («ապագայի հայեցակարգը»)՝ այն սկզբնակետը (ճախապայմանը), որն անհրաժեշտ է մարդկային զարգացման ընդհանուր գործընթացում ազգային համակարգի տեղն որոշելու համար:

Այդ իսկ պատճառով ազգային զարգացման հեռանկարին նվիրված բոլոր վերլուծական նյութերը սկսվում են ապագայի հայեցակարգի որոշակի, համառոտ նկարագրությունից:

## *1. Անհատի և հասարակության շահերի ներդաշնակեցումը որպես հասարակական-քաղաքական համակարգի դինամիկան որոշող հիմնական միտում*

Առաջին և գլխավոր հատկանիշը, որ մատնանշում են, բոլոր առաջատար արևմտյան փորձագետները, հասարակական զարգացման ողջ պարադիգմայի (հասարակական հոգեբանությունը որոշող արժեքային չափանիշների հիմնարար համակարգ) փոփոխությունն է: Նոր պարադիգման սկիզբ է առնում «անհատ-հասարակություն» և «մարդ-բնություն» համակարգերի ներդաշնակ զարգացման անհրաժեշտությունից՝ առանց մրցակցային հակադրության. անհատի շահերը բարձր են հասարակության շահերից (անգլո-սաքսոնական տարբերակ) և հասարակության շահերը:

հերը բարձր են անհատի շահերից (եվրոպական տարբերակ): Այս պահանջը ժամանակակից հասարակական-քաղաքական համակարգերի միտումների ձևավորման գլխավոր շարժիչ ուժն է: Այդ հարաբերակցության իրագործման ձևի հետ է կապվում «հետարդյունաբերական» կամ «հիմնադրամացիոն հասարակություն» (որին հակված են Արևմուտքի երկրները) հասկացության՝ «հասարակական կառուցվածքի մոդելի», գլխավոր բնութագիրը:

Ինֆորմացիոն հասարակության հիմնական հատկանիշներն են.

✓ հասարակության զարգացումը որոշվում է անհատի զարգացման մակարդակով, այլ ոչ թե նյութական ռեսուրսներով, հետևաբար հասարակության զարգացումը որոշվում է գիտության, կրթության և մշակույթի զարգացման մակարդակով,

✓ անհատական գործունեության մեջ հիմնական են դառնում ստեղծագործող անհատի ինքնահաստատման շարժառիթները, այլ ոչ թե ավելի շատ վաստակելու ձգտումը,

✓ անձնական սեփականությունը դուրս է մղում մասնավորին, մեկ հաստատության կամ կառույցի շրջանակներում աշխատելու համար ամենևին անհրաժեշտ չէ գործունեության ֆիզիկական համատեղում,

✓ հասարակության դասակարգումը (շերտերի) որոշվում է ոչ թե սեփականության չափերով, այլ իրականացվող ֆունկցիաներով,

✓ նյութական բարիքների ստեղծման արագությունը գերազանցում է դրանց նկատմամբ պահանջմունքների ձևավորման արագությանը, այստեղից՝ առաջարկը թելադրում է պահանջարկը,

✓ տնտեսական միավորների շրջանում առաջատար են դառնում ստեղծագործական անհատ հանդիսացող սեփականատիրոջ՝ առաջնորդի, կողմից միավորված կոլեկտիվները: Նրանց հարստությունը հենց իրենց ընկերակցության բաժնետոմսերն են: Այդ կոլեկտիվների հիմնական միջուկը ստեղծագործական ընտրախավն է: Հենց այդպիսի ընկերակցությունների հետ է ընդունված կապել անցումը «enterprise»-ից (ընկերություն, որի հաջողությունը կախված է արտաքին միջավայրի պայմաններից) «interprise»-ին (ընկերություն, որի հաջողությունը կախված է կոլեկտիվից):

✓ այդ նոր կոլեկտիվներին բնորոշ է կազմակերպչա-կառավարման գործոնի դերի որակական փոփոխությունը, ստեղծագործական ընտրա-

խավն իր գործունեության համաձայնեցման համար պահանջում է կատարելապես այլ մոտեցում,

✓ եկամուտների բևեռացման հարթման միջև 70-ական թվականները նկատվող միտումը թուլանում է ինֆորմացիոն հասարակությանը անցման հետ մեկտեղ, և նորից խորանում է եկամուտների բևեռացումը;

Տնտեսական առումով պարադիզմայի հերթափոխության այդ հատկանիշը նշանակում է մարդկային կապիտալի մեջ ներդրումների աճի առաջանցիկ տեմպեր: Արևմուտքի երկրներում այդ միտումը դրսևորվում է հիմնական կապիտալի մեջ արվող ներդրումների համեմատությամբ գիտության և կրթության մեջ միջին հաշվով 1,5 անգամ ավել չափերով ներդրումների իրականացմամբ: Գիտության և կրթության մեջ ներդրումների գումարային ցուցանիշը բոլոր զարգացած երկրներում դասվում է ազգային անվտանգության կակորագույն ցուցանիշների շարքը:

Գիտա-տեխնիկական և տեխնոլոգիական զարգացման ժամանակակից մակարդակը հանգեցրել է այնպիսի հասկացությունների միջև եզրերի վերացմանը, ինչպիսիք են «սոցիալականը» և «տնտեսականը», այլ կերպ ասած՝ կտրուկ կրճատվել է սոցիալական ոլորտում ներդրումների և դրանից տնտեսական հատույցի առաջացման միջև լազր: Զարգացած երկրներում սոցիալական բնույթի ծախսումները կազմում են ՀՆԱ-ի 25-30%-ը:

## *2. Հասարակական կոնսենսուսի ձևավորման ինստիտուտների առաջանցիկ զարգացումը*

Հասարակության զարգացումը որոշվում է «ֆունկցիա-ինստիտուտ» փոխադարձ կապի դինամիկայով: Հասարակական ֆունկցիան կամ ֆունկցիաները ինստիտուտի գլխավոր բնութագրական հատկանիշներն են: Ինստիտուտների դինամիկան ածանցյալ է հասարակական ֆունկցիաների դինամիկայից՝ դրանց միջև հարաբերակցության փոփոխությունից կամ նոր ֆունկցիաների առաջացումից:

Արևմտյան փորձագետների մեծ մասը հատկապես ընդգծում են հասարակական կոնսենսուս կամ փոխզիջում գտնելու ֆունկցիայի հետ կապված ինստիտուտների արագ զարգացումը:

Այդ գործընթացը իր ընդգծված արտահայտությունը գտել է պետական

մակարդակով սոցիալ-քաղաքական գործընկերոջ սկզբունքի գերակայության պաշտոնական հայտարարության մեջ: Համաձայն այդ սկզբունքի գործածվող որոշումը կարող է արդյունավետ լինել միայն նրանց հոգեբանական ընկալման և կառավարման օբյեկտների որոշումների մշակման մեջ մասնակցության դեպքում: Այդ սկզբունքին համապատասխան, սկսած 50-ական թվականներից աշխարհի բոլոր զարգացած երկրներում առաջանում են իրավական բազայի վրա կողմնորոշվող համապատասխան կազմակերպչական կառույցներ, որոնք կոչված են ապահովելու համաձայնությունը գործադիր իշխանության և վարձու աշխատողների միջև:

Սեփականության ձևերի զարգացման համաաշխարհային միտումն ընթանում է 2 ուղղություններով.

✓ սոցիալիզացում՝ սեփականության բոլոր ձևերն աշխատում են հասարակության շահերի վրա ծրագրավորված իրավական և բարոյական միջավայրում, և այդ իմաստով հանդես են գալիս որպես սեփականության հասարակական ձևերի տարբեր դրսևորումներ: Այդ փաստն արտացոլված է որոշ երկրների սահմանադրության մեջ, մասնավորապես ԴՀ-ի:

✓ Վրագ տեսնելով զարգանում են սեփականության այն ձևերը, որոնք ստեղծագործական անհատին տալիս են առավելագույն ազատ տարածություն: Այդ գործոնների հետ կապված են մանր սեփականության անկանոն արագ «ռենեսանս»-ը և ձեռնարկության համաչափության կրճատման ընդհանուր միտումը:

Սեփականության սոցիալիզացումը բնակության միջավայրի՝ հողի, օդի, ջրի, չվերականգնվող ռեսուրսների միասնության գլոբալ փաստի, և տեխնոլոգիական ժամանակակից առաջընթացի պարագայում դրանց տարբերակված դիտարկման վտանգի աստիճանական գիտակցման արտահայտությունն է:

Սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքը դառնում է պետության ներքին քաղաքականության բազային գաղափարական հիմքը: Այդ սկզբունքի տնտեսական տեսանկյունը արտահայտվում է աշխատանքի կազմակերպման ձևերում՝ այսպես կոչված տնտեսական ժողովրդավարության գործընթացի արագացումը: Ժամանակակից փուլում աշխատանքի բարձր արդյունավետությունը անհնար է առանց աշխատողների լիարժեք մասնակցության.

- կառավարման մեջ

- սեփականության մեջ
- եկամուտների բաշխման մեջ

Առանձին ֆիրմաների մակարդակով դրանք խորհուրդներն են վարչության և անձնակազմի հավասար մասնակցությամբ: Այդ խորհուրդներում որոշվում են վարձակալության, աշխատանքի կազմակերպման, աշխատավարձերի, այսինքն սոցիալ-տնտեսական բնույթի ընդհանուր հարցեր: Միաժամանակ զուտ տեխնիկական հարցերը մնում են վարչության իրավասության սահմաններում: Ազգային մակարդակով՝ Անգլիայում տնտեսական զարգացման ազգային խորհուրդը, երմանիայում՝ հասարակական զարգացման վարչությունը, Կանադայում՝ բարձրագույն տնտեսական խորհուրդը:

Բաժնետոմսերի բաշխման միջոցով անձնակազմի մասնակցությունը սեփականության մեջ առավել տարածված է ԱՄՆ-ում: Այդ գործընթացի պետական խրախուսումը իրագործվում է հարկային արտոնությունների միջոցով:

Վարչության հետ հատուկ համաձայնագրերի հիման վրա շահույթների մեջ մասնակցությունը առավել տարածված է երմանիայում և Ճապոնիայում:

Տնտեսական ժողովրդավարությունը սոցիալ-տնտեսական գործունեության սկզբունքի դրսևորումներից մեկն է, որը հանդես է գալիս քաղաքացիական հասարակության մեջ որպես հասարակական համաձայնության ձևավորման հիմք:

### *3. Ինստիտուցիոնալ մակարդակի վրա ազգային զարգացման կառավարման համակարգում ռազմավարական սկզբունքի արագացումը*

Հասարակության զարգացման ռազմավարության մշակումը և կենսագործումը հանդես է գալիս որպես պետության գլխավոր համապարփակ ֆունկցիա:

Այդ ֆունկցիան ժամանակակից փուլում ըստ էության արտահայտվում է գործադիր իշխանության երկաստիճան համակարգին անցումով, որի բարձրագույն աստիճանը ազգային անվտանգության համակարգն է Ազ-

գային անվտանգության խորհրդի գլխավորությամբ (ԱԱԽ): Հենց այդ աստիճանը կոչված է նախ՝ հստակ ձևակերպելու զարգացման ռազմավարական գերակայությունը, երկրորդ, նախարարությունների և գերատեսչությունների մակարդակով նրանց պահպանման ապահովումը (երկրորդ աստիճանը):

Ռազմավարական սկզբունքի արագացումը տեղի է ունենում բոլոր մակարդակներում՝ պետականից մինչև միկրոմակարդակը տնտեսության մեջ:

Պետական մակարդակով այն իր արտացոլումն ստանում է զարգացման պլանավորման ֆունկցիայով (development planning), որի նշանակությունը՝ ինստիտուցիոնալ փոփոխությունների նախագծուղացնող պլանավորման և բարձր ստորակարգման մակարդակում այդ ֆունկցիան կատարող որոշակի կազմակերպչական օղակն է: Այդ դեպքում պլանավորման զարգացման սկզբունքը (որակական զարգացումը) դառնում է պետությունից մինչև ֆիրմաներն ազգային գաղափարախոսության կառավարման միջանցիկ սկզբունքը: «Պլանավորման զարգացման» ինստիտուտը գործընթացի ավարտական արտահայտությունն է, որում, մասնավորապես առանձին ֆիրմաների մակարդակով, ռազմավարական սկզբունքի արագացումն իր արտահայտությունն ստանում է ներդրողների ֆիզիկական անձանց, կողմից ընդունվող որոշումների վրա ճնշման թուլացմամբ:

Միջկորպորատիվ ներդրումների տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում կազմում է. ճապոնիայում՝ 68,5 %, ԱՄՆ-ում՝ 55 %, երմանիայում՝ 33%, Անգլիայում՝ 34%: Ընդ որում նշվում է, որ ընդհանուր շահույթի մեջ նվազում է բաշխվող շահույթի տեսակարար կշիռը:

#### *4. Ապագա հասարակության հոգևոր-մոդելի վրա հիմնված հասարակության մոդելը*

Հոգևորի վրա հիմնված հասարակարգի մոդելի գլխավոր տարբերակիչ հատկանիշը անհատի հոգևոր-հոգեկան որակների ընդլայնված վերարտադրությունն է:

Անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ գիտելիքների պարզ կուտակումը

դեռևս չի նշանակում անհատի որակական զարգացում: Պարզ կուտակումը անհատին դարձնում է օգտակար հասարակական կյանքի որոշակի ոլորտում:

Հոգևոր-հոգեբանական զարգացումը անհատի կարգի մոդելի փոփոխությունն է, նրա ամբողջականության փոխադրումն առավել բարձր մակարդակի վրա:

Մոդելի կարգի այլ բնութագրիչ, հոգեկանի վրա հիմնված, հատկանիշ է այն փաստի գիտակցական ընդունումը, ըստ որի սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացումը պայմանավորող նախապատճառ են այն գաղափարները, որոնք միաժամանակ ինքնազարգացող համակարգեր են:

Հոգևորի վրա հիմնված կարգի մոդելին անցման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ինֆորմացիոն հասարակությունը նույնպես ի վիճակի չէ արմատապես լուծել «մարդ-շրջակա միջավայր» և «մարդ-մարդ» փոխհարաբերությունների հետ կապված երկակի էկոլոգիական հիմնախնդիրներ:

Այդ փաստն արդեն շատ հաճախ քննարկվում է համաշխարհային մամուլում:

Էկոլոգիայի հետ կապված հիմնախնդիրների առաջադրումը նշանակում է մի դրույթի ընդունում, ըստ որի սոցիալ-տնտեսական համակարգերը արտաքին միջավայրի՝ էկոհամակարգերի, համեմատությամբ ավելի ցածր ռանգ ունեն:

Արևմտյան քաղաքակրթության համար այդպիսի մոտեցումը հիմնավորվում էր Վերնադսկու, Լեռուայի և Թեյար դե Շարդենի աշխատություններով: Բայց Արևելքում այդպիսի մոտեցման կուլտուրան արմատավորվել է բուդդայականության և ինդուիզմի առանձնահատկություններում:

Ինֆորմացիոն հասարակության մոդելի սկզբունքորեն ոչ ամբողջական լինելու ըմբռնումը սկսում է ավելի խոր գիտակցել ոչ միայն արևմտյան, այլև համաշխարհային հասարակությունը:

Արևմուտքի զարգացած երկրներում ընդգծված կերպով դրսևորվում է միաժամանակյա երկու փաստ.

- ինֆորմացիոն հասարակությանը վերագրվող հատկանիշների բավարար մակարդակի առկայություն,
- քառսի աճ (ընտանիքի քայքայումը, բարոյական վատթարացումը,

այլասերման կամ խեղաթյուրման վրա բարոյական արգելքի վերացման մշտական միտման դրսևորումը, բռնության փաստերի ավելացումը՝ հատկապես երիտասարդության շրջանում, ազգային գենոֆոնդի որակական փոփոխությունը վտանգող օտարածին գեների հարկադրական, պայմանավորված մշտական հոսքը և այլն):


«Ես կարծում եմ, որ այժմ բաց հասարակության գլխավոր թշնամին ոչ թե կոմունիզմն է, այլ կապիտալիզմը» (Ջորջ Սորոս, 1997թ.):

Դրա բացատրությունը կարող է կապված լինել հետևյալ երկու գործոններից մեկի կամ նրանց կոմբինացիների հետ.

- ինֆորմացիոն հասարակարգի մոդելը անկայուն է, և ինքնին հոգևորի վրա հիմնվող հասարակությանն անցման միջանկյալ մոդել է,
- հասարակարգի մոդելների հերթափոխության գործընթացը խիստ արագացել է ժամանակի կոնկրետ պատմական կտրվածքում: Այլ խոսքով, ինֆորմացիոն հասարակության մոդելը հազիվ ծագած լինելով, արդեն իսկ սկսում է բարոյապես ծերանալ:

Հոգևորի վրա հիմնված հասարակարգի մոդելի նկատմամբ այլընտրանք չունենալու օգտին է խոսում նաև հետևյալ կարևոր հանգամանքը.

Հասարակական համակարգերի ամբողջականությունը որոշվում է նրա երեք առավել ընդհանրական ինստիտուտների՝ կրոնի, գիտության և մշակույթի ամբողջականությամբ.



Նկ.1

Հոգևորը այն միասնական սկզբունքն է, որի տարբեր առումներով հանդես են գալիս բուրգի հիմքի կողմերը: Ներկայումս այդ կողմերից յուրաքանչյուրը կանգնած է որակական վերակառուցման անհրաժեշտության առաջ, և այդ կողմերից ոչ մեկն առանձին ունակ չէ արմատապես լուծելու տվյալ փուլում մարդկային քաղաքակրթության զարգացման հիմնախնդիրները: Այդ իմաստով, տեղեկատվական հասարակության մոդելը, միայն գիտության տեսանկյան վրա կողմնորոշվող նրա ժամանակակից ինստիտուցիոնալ ձևերում սկզբունքորեն համարվում է ոչ ամբողջական:

Գիտության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ նրա նվաճումները օգտագործվում են ոչ միայն և ոչ այնքան բարեկեցության աճի համար, որքան ֆիզիկապես մարդուն ոչնչացնելու հնարավորությունների ավելացման համար և, որ ամենասարսափելին է՝ հոգեպես: Դեպի ինֆորմացիոն հասարակության մոդելին անցումը միայն բազմապատկում և սրում է գոյություն ունեցող հակադրությունները, ստեղծում քաղաքակրթության գոյությունը վտանգող աղետների հնարավոր շատ տարբերակներ: Գիտության դիտարկումը որպես ինքնաբավ գործոն՝ իր տեսակով հնացած ռոմանտիզմ է, հիվանդություն, որից անհրաժեշտ է ինչքան հնարավոր է շուտ ձերբազատվել:

Մարդկության տեսանելի անցյալը՝ կրկնվող օրինակների ռոմանտիզմ է՝ զարգացման ինչ-որ գործոնի պաշտամունք: Կրոնի վրա հիմնված հասարակության մոդելների առկա օրինակները նույնպես լավատեսություն չեն ներշնչում:

Միայն միասնական դիրքերից՝ հոգևորի հետ գիտության, կրոնի և մշակույթի ինտեգրացման, սկզբունքի վրա հիմնված հասարակարգի մոդելն է, որ ներկայումս ժամանակին պահանջ է:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից փուլում վերոհիշյալ թվարկած երեք ինստիտուտներից առավել դինամիկը գիտությունն է:

Այդ համատեքստում հատկանշական է նոր մետագիտական ուղղության՝ սիներգետիկայի, բուռն զարգացումը:

Ծագելով լագերային ֆիզիկայի երկու խոշոր մասնագետներ՝ Խակեմի և Ի. Պրիգոժինի աշխատանքների շնորհիվ, այն արագ վերաճեց մարդու ճանաչողական համակարգի և սոցիալական համակարգերի զարգացման սկզբունքների մասին գիտության:

Սիներգետիկայի հիմնական արդյունքները անմիջականորեն միակցվում են մարդկության կրոնական ճանապարհի (լայն իմաստով) լավագույն հոգևոր նվաճումների հետ:

Այլ խոսքով սիներգետիկան արդեն իրագործում, անցկացնում է կամուրջներ կրոնի և գիտության միջև:

### 5. Համաշխարհայնացում

Համաշխարհայնեցման հասկացությունը որպես համակարգ նշանակում է ժամանակակից փուլում մարդկության ամբողջականության նախասկզբնական փաստի դրսևորման որակական առանձնահատկություն:

Այդ որակական առանձնահատկությունը հնարավոր դարձավ տեղեկատվական տեխնոլոգիաներում հեղափոխական փոփոխությունների շնորհիվ:

Ի վերջո տեղեկատվությունը օբյեկտիվորեն դուրս եկավ ազգային շրջանակներից և վերածվեց համաշխարհային գլոբալ ռեսուրսի:

Միաժամանակ տեղեկատվությունը որպես ռեսուրս սկզբունքորեն տարբերվում է այլ ռեսուրսներից:

Ի տարբերություն այլ ռեսուրսների, տեղեկատվությունը չեզոք չէ օգտագործողների նկատմամբ:

- Տեղեկատվության օգտագործումը փոխում է հենց օգտագործողին:
- Տեղեկատվության օգտագործման մակարդակը կախված է օգտագործողի մակարդակից:

Այդ պատճառով էլ հասարակության կարևորագույն բնորոշիչները են դառնում.

• տեղեկատվության քննադատորեն յուրացնելու և վերարտադրելու ազգային հասարակության համակարգային կարողությունները: Այդ կարողությունները անմիջականորեն կապված են կրթության, գիտության և մշակույթի զարգացման մակարդակի հետ:

• Ազգային և համաշխարհային մակարդակով գիտության և մշակույթի արժեքների նկատմամբ բնակչության մատչելիության աստիճանը որակը: Այդ պարամետրը որոշվում է հասարակության տեղեկատվական մակարդակով:

Նշված բնութագրիչների ռազմավարական նշանակությունը նրանցում առաջադրում է ազգային անվտանգության (ԱԱ) մի շարք առաջնահերթ պարամետրեր:

Համաշխարհայնացումը մարդկային հասարակության ամբողջականության համակարգային արդյունքի ժամանակակից արտահայտությունն է:

Իրական կյանքում այդ համակարգային արդյունքը ներկայանում է իրար հետ փոխկապակցված երեք կողմերով. քաղաքական, հումանիտար և տնտեսական:

Քաղաքական կողմը որոշակի իմաստով ավարտական է, այսինքն՝ որոշակի փուլում ամբողջության մեջ համաշխարհայնացման գործընթացի զարգացման հստակ դրսևորումը:

Համաշխարհայնացման քաղաքական կողմը ներկայումս դրսևորվում է մարդկության քաղաքական կազմակերպման առնվազն երկնակարգակ համակարգի արագ ձևավորմամբ:

Ստորին մակարդակում գտնվում են մեկ կամ մի քանի երկրների շուրջը ձևավորվող միջպետական, տարածաշրջանային միավորումները, որոնք հանդես են գալիս ձգողականության բևեռի դերում:

Տարածաշրջանային միավորման դասական օրինակ է միացյալ Եվրոպան (Արևմտյան):

Այդ միության կենտրոններն են Ֆրանսիան և Գերմանիան:

Համանման գործընթացներ ընթանում են նաև Խաղաղ օվկիանոսին կից ասիական տարածաշրջանում, որտեղ որպես ձգողության բևեռներ հանդես են գալիս Չինաստանը և ճապոնիան:

Հնդկաստանի զարգացման բուռն տեմպերը վկայում են ձգողության նոր բևեռի ձևավորման հավանականության մասին:

Հունանիտար քաղադրամասը այդ գործընթացներում կատարում է երկարաժամկետ, հիմնարար դեր:

Այդ իմաստով Արևմտյան Եվրոպայի միացումը դիտվում է որպես ընդհանուր մշակույթ և պատմական արմատներ ունեցող ժողովուրդներից բաղկացած մեկ «ռասսայական ընտանիքի» անդամների միացում:

Ինչ վերաբերում է տնտեսական քաղադրատարրին, ապա այն առավել դինամիկ է:

Ազգային տնտեսությունների ինտեգրացումն անցել է որոշակի կրիտիկական սահմանը և ֆիրմայից մինչև պետական մակարդակը դարձել է

զարգացման պլանների մշակման վրա ազդող գործոն: Վերջին 20 տարիների ընթացքում համաշխարհային առևտրի աճի տեմպերը միջին հաշվով 1,5 անգամ գերազանցում են համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպերին: Այդ գործընթացը առավել արագ տեմպերով ընթանում է ֆինանսական ոլորտում:

Արտասահմանյան ուղղակի ներդրումների աճի տեմպերը երեք անգամ բարձր են ՀՆԱ-ի աճի տեմպերից:

Տարադրամային և առևտրական գործառույթների արժեքային ծավալների հարաբերակցությունը կազմել է 1980թ. 10/1, իսկ 1992թ.՝ արդեն 60/1:

Այսօր աշխարհում ֆինանսական գործառույթների ծավալը մի քանի անգամ գերազանցում է համաշխարհային ՀՆԱ-ի մակարդակը:

Ֆինանսական գործոնի գերիշխումը դրսևորվում է խոշոր ֆինանսական ճգնաժամների հաճախականության ավելացմամբ: Ֆինանսական ճգնաժամին մասնակցող խոշոր երկրների վերլուծությունները (Մեքսիկա, Բրազիլիա, ասիական երկրներ, Ռուսաստան) թույլ են տալիս եզրակացնելու, որ չնայած որոշակի առանձնահատուկ տարբերություններին, նրանց հիմքում ընկած են համատեղ գործող երկու հիմնական գործոններ.

- ֆինանսական կապիտալի բարձր շարժունակությունը,
- ֆինանսական համակարգերի (ՖՀ) դասական մոդելների սահմանափակությունը:

Ժամանակակից ֆինանսական համակարգերի հիմքում ընկած է իրական հատվածի հետ դրանց փոխազդեցության եռաստիճան մոդելը. առաջին մակարդակում՝ իրական արտադրությունը, երկրորդում՝ իրական հատվածում ֆինանսական ռեսուրսների փոխադարձ համարժեք հոսքերը և ֆինանսական համակարգերում իրական հատվածին համապատասխանող ֆինանսական պարտավորությունները, երրորդում՝ կապիտալի և արժեթղթերի երկրորդային շուկան (իրական հատվածի ֆինանսական պարտավորությունները) պետք է տեղի ունենա ֆինանսական ռեսուրսներում իրական հատվածի օբյեկտիվ պահանջների համեմատական գնահատմամբ:

Որպես այդ եռաստիճան մոդելի սկզբնական գլխավոր առանձնահատկություն հանդես եկավ իրական հատվածում (1-ին աստիճան) և երկրորդային շուկայում (3-րդ աստիճան), նյութական և տեղեկատվական գոր-

ծընթացների արագության կտրուկ տարբերությունների փաստը: Այս ամենի հետևանքով ձևավորվեց առաջինից դեպի երրորդ աստիճանը ձգվող բուրգ: Դա նշանակում է, որ 3-րդ աստիճանի տեղեկատվական և մտավոր ներուժը անհամեմատ արագ է աճել, քան իրական հատվածի ներուժը: Ընդ որում, գիտատեխնիկական առաջընթացի հետևանքները միայն ավելացնում են նշված տարբերությունները:

Համաշխարհայնացման գործընթացը առաջին հերթին առաջադրում է առավել հրատապ այնպիսի կառուցվածքային հիմնախնդիրներ, ինչպիսին է տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում ազգային համակարգերի տեղի ու դերի որոշումը:

Այդ հիմնախնդրի հրատապությունը ազգային համակարգի դինամիկայի համար դժվար է գերազանհատել:

Հիմնախնդրի էությունը կայանում է նրանում, որ եթե պատասխանը չի ձևավորվում համակարգի շրջանակներում, ապա տրվում է արտաքին ուժերի կողմից, ելնելով նրանց շահերից և առաջացող բոլոր հնարավոր հետևանքներից:

Ազգային հասունության մակարդակը հիմնախնդրի ռազմավարական նշանակության գիտակցումն է և արտահայտվում է տարածաշրջանային ու գլոբալ գործընթացներում ազգի տեղի և դերի հստակ պատկերացման մեջ (ազգային ինքնանույնականացումը):

Ազգային ինքնանույնականացման գործընթացի համապատասխանությունը և խորությունը նոր հազարամյակ մուտք գործելու հաջող գործոնն է: Այդ հիմնախնդրի լուծումը օրգանապես ներառում է տնտեսական աղքատության խնդիրը, համաշխարհային տնտեսական համակարգում ազգային տնտեսության սեզմենտը:



## **II. Հասարակության զարգացման (հասարակական ինքնակազմակերպման) գործընթացն ապահովող ինստիտուտների համակարգի լրիվությունը (փակությունը)**

Հասարակական համակարգերի զարգացման ժամանակակից սիներգետիկ մոտեցումը հստակ տարբերակում է նոր որակի ձեռքբերման հետ կապված գործընթացները (ինքնակազմակերպումը) և բնութագրերի բարելավումը առանց որակի փոփոխության:

Երկարաժամկետ հատվածում սոցիալական համակարգի կայունությունը որոշվում է ինքնակազմակերպման գործընթացի հետ կապված համակարգային կառույցների թելադրող դերի աստիճանով:

Ազգային պետականության մակարդակի վրա խոսքը պետք է գնա ինքնակազմակերպման գործընթացն ապահովող ինստիտուտների համակարգի մասին:

Կառավարման պետական համակարգի արդյունավետությունը անհրաժեշտորեն որոշվում է ազգի ինքնակազմակերպման ինստիտուտների համակարգի լրիվությամբ:

Քանի որ հասարակության զարգացման գործընթացը որոշվում է ֆունկցիաներ-ինստիտուտներ հարաբերակցությամբ, ապա ինստիտուտների լրիվության չափանիշ է իրականացվող ֆունկցիաների համակարգի լրիվությունը:

Այս իմաստով ինստիտուտների ամբողջությունը կարելի է տրոհել երեք խմբերի՝ ենթահամակարգերի, որոնցից յուրաքանչյուրը կապված է որոշակի ֆունկցիայի հետ:

Դրանցից առաջինը կապված է մարդու հոգևոր-հոգեբանական զարգացման ֆունկցիայի հետ:

Այդ ենթահամակարգը ապահովող հիմքի դերում հանդես է գալիս ազգային հումանիտար համալիրը:

Միաժամանակ պետք է գոյություն ունենա ազգային և համաշխարհային մշակութային մվաճումների մատչելիությունն ապահովող ուղիների բավականաչափ զարգացած ցանց:

Հայաստանում հումանիտար համալիրի միջուկ պետք է դառնան երեք ինստիտուտներ (նեղ իմաստով). ազգային և համաշխարհային մշակույթ-

ների ինստիտուտը (թեոսոֆիա, պատմություն, ազգագրություն և հոգեբանություն, իրավունք և սոցիոլոգիա), հասարակական զարգացման ինստիտուտը (պետական կառավարման համակարգը, տարաբնակեցման համակարգը և տարածաշրջանային զարգացումը), ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (աշխարհաքաղաքական հետազոտությունները, տեղեկատվության հավաքման և վերամշակման մեթոդները, ռազմական դոկտրինան, միջազգային համագործակցությունը և միջազգային իրավունքը):

Այդ ինստիտուտները, հիմնարար ակադեմիական գիտության մաս լինելով, պետք է դառնան ազգային անվտանգության համակարգի գիտամեթոդական հիմքը. ազգային և համաշխարհային մշակույթների ինստիտուտը՝ գաղափարախոսական և իրավական անվտանգության, հասարակական զարգացման ինստիտուտը՝ տնտեսական և կազմակերպչական անվտանգության, ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը՝ արտաքին քաղաքական և պաշտպանական անվտանգության:

Այդ հումանիտար համալիրի հիմնական, երկարաժամկետ խնդիրը նպատակաուղղված է ազգային մենտալիտետի ձևավորմանը, հնդեվրոպականի և համաշխարհայինի մեջ ազգային մշակույթի դերի ու տեղի մասին պատկերացումների մշակումը, համամարդկային քաղաքակրթության համատեքստում մեր ժողովրդի առաքելության գիտակցումը:

Հումանիտար համալիրի տրամադրության տակ պետք է ներկայացված լինի բավականաչափ ծավալով տեղեկատվական ռեսուրսներ, ամենից առաջ հեռուստատեսության և ռադիոյի, հասարակության զարգացման ռազմավարությունը պարզաբանելու, դրական հոգևոր-բարոյական դաշտը ձևավորելու համար:

Ինստիտուտների երկրորդ համակարգը կապված է ռազմավարական պլանավորման ֆունկցիաների հետ:

Այժմ համընդհանուր է կառավարման համակարգում ռազմավարական և ընթացիկ մակարդակների հստակ բաժանման անհրաժեշտության վերաբերյալ կարծիքը (հայեցակարգը), որպեսզի ռազմավարական մակարդակի վրա ընդունված որոշումները ստորին մակարդակի համար հանդես գան որպես սահմանափակումներ և կողմնորոշիչներ:

Հենց ազգային զարգացման ռազմավարության ապահովման ֆունկցիայի հետ է կապվում Ազգային Անվտանգության (ԱԱ) ինստիտուտը:

Ռազմավարական պլանավորման խնդիրներից մեկը ինստիտուցիոնալ բարեփոխումների պլանավորումն է:

Այդ ֆունկցիան Արևմուտքում ստացել է «development planning» անվանումը և կրում է բանաձևային արտահայտություն. զարգացման պլանավորումը = ինստիտուցիոնալ փոփոխություններ + աճ:

«development planning»-ի նշանակությունն է «ռազմավարական նպատակ-ֆունկցիա-ինստիտուտ» շղթայի համապատասխանության նվաճումը:

ՀՀ-ի գործադիր իշխանության համակարգում անհրաժեշտ է ձևավորել ինստիտուցիոնալ և կազմակերպա-ֆունկցիոնալ փոփոխությունների պլանավորման ֆունկցիա կատարող՝ զարգացման պլանավորում (development planning) իրականացնող կազմակերպական կառույցների ուրվագծեր: Այդ ֆունկցիան պետք է իրագործվի ամբողջ պետական իշխանության ուղղագիծ կտրվածքով: Այդ ֆունկցիայի կատարման ընդհանուր կողողինացումը պետք է հանձնարարվի վարչապետին կամ ռազմավարական պլանավորման գծով փոխվարչապետին:

Ջարգացման պլանավորման ֆունկցիայի մեթոդական ապահովման կենտրոն կարող է դառնալ զարգացման պլանավորման գծով միջգերատեսչական կոմիտեն կամ էլ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ համապատասխան ստորաբաժանումների ձևավորման դեպքում:

Ջարգացման պլանավորման ֆունկցիայի միջանցիկ բնույթն իրագործվում է պետական գործադիր իշխանության բոլոր բարձր օղակներում համապատասխան կառույցների ստեղծման միջոցով, ընդ որում դրանք պետք է գտնվեն երկակի ենթակայության տակ՝ անմիջական նախարարության ղեկավարության, կամ էլ՝ զարգացման պլանավորման գծով գերատեսչության կամ կոմիտեի:

Ջարգացման պլանավորման գաղափարախոսությունը պետք է դառնա ազգային գաղափարախոսության մի մասը: Ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերը պետք է ներկայացվեն Կառավարությանը, Ազգային անվտանգության խորհրդին և ընդունումից ու հաստատումից հետո վերածվեն կառուցվածքային բարեփոխումների փուլային ծրագրերի:

Ջարգացման պլանավորման համակարգի կարևորագույն արդիական խնդիրներ պետք է դառնան.

- կրթության ազգային համակարգում հեռանկարային ձևերի և մեթոդ-

ների օգտագործումն ու կրթության ազգային հայեցակարգի մշակումը,

- գիտական գործունեության կազմակերպման ձևերի մշակումը,

- գիտության և տնտեսության ինտեգրացման մեթոդները,

- պետական իշխանության համակարգում որոշումների ընդունման մեթոդները,

- պետական իշխանության ինստիտուցիոնալ կառուցվածքը:

Ինստիտուտների երրորդ ենթահամակարգը կապված է հասարակության մեջ փոխհամաձայնության մշակման ֆունկցիայի հետ:

Այժմ Արևմուտքի զարգացած երկրներում առավել արագ տեմպերով զարգանում են այդ ֆունկցիայի հետ կապված ինստիտուտները:

Այդ փաստն իր արտացոլումն է գտել Արևմուտքի շատ երկրներում «սոցիալ-քաղաքական գործընկերության» սկզբունքի պաշտոնական հռչակմամբ:

Այդ սկզբունքի հիմք է հանդիսանում այն դրույթն, ըստ որի կառավարման որոշումները դառնում են արդյունավետ և կենսունակ միայն այն դեպքում, երբ սոցիալական օբյեկտը գիտակցում և կիսում է նրանց իմաստը:

Այդպիսի վիճակի հնարավոր է հասնել միայն որոշումների մշակման գործընթացում օբյեկտի մասնակցության դեպքում:

Այսինքն կառավարության բոլոր որոշումները կրթության, գիտության, կառուցվածքային վերակառուցման և այլ համակարգերի նկատմամբ արդյունավետ կգործեն միայն այն դեպքում, եթե նրանց մշակմանը ակտիվորեն մասնակցում են բոլոր շահագրգիռ անձինք:

Այստեղ սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ սոցիալական օբյեկտի գործունե մասնակցությունը ենթադրում է ընտրախափի առկայություն:

Այդպիսի խավի բացակայության դեպքում գործընթացին մասնակցությունը վերածվում է մեխանիկական, անհիմաստ միջոցառման:

Հենց այդ պատճառով էլ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընտրախափների ստեղծումը մոդելավորման տեսության մեջ (նոր անկախություն ձեռք բերած երկրների համար պետականության ստեղծման տեսությունը) համար առաջին խնդիրն է:

Տնտեսության մեջ սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքի արդյունավետ կիրառման օրինակ է արդյունաբերական քաղաքականու-

թյան մշակման և իրագործման ճապոնիայում գոյություն ունեցող ինստիտուտը:

Այդ ինստիտուտի հիմքը «Կառուցվածքային քաղաքականության գծով խորհուրդն» է, որը, սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքին համապատասխան, միավորում է նախարարության ղեկավարությանը, տնտեսության կարևորագույն նշանակության ուղղություններում խոշոր ֆիրմաների կառավարիչներին, կիրառական գիտության ներկայացուցիչներին (ՀՀ-ի պայմաններում կարող են լինել Ակադեմիայի Հիմնախնդրային խորհուրդների նախագահները), անկախ տնտեսագետներին, լրագրողներին:

Խորհուրդը կառավարությանն ու հասարակությանն է ներկայացնում իր պատկերացումները ժողովրդական տնտեսության ապագա կառուցվածքի և կիրառական գիտության մասին:

Բոլոր շահագրգիռ հասարակական խավերի հետ երկխոսության շնորհիվ ձեռք է բերվում զարգացման համեմատական գերակայությունների վերաբերյալ փոխհամաձայնություն:

Շահագրգիռ ֆիրմաների հետ մեկտեղ, որոնց գործունեությունը գտնվում է այդ գերակայությունների հունում, կազմակերպվում են խմբեր առանձին նախագծերը մանրամասն վերամշակելու համար:

Սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքի դրսևորման այլ շատ կարևոր ձև է հիմնական ֆոնդերն արդյունավետ օգտագործելու համար պետության և սեփականատերերի փոխադարձ պատասխանատվության ինստիտուտի ստեղծումը: Հենց այդ ուղղությամբ է աշխատում զարգացած երկրների տնտեսական օրենսդրությունը:

### III. Ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգը

Վերոհիշյալ ինստիտուտների խմբերի ստեղծման, պաշտպանության և համակարգային գործունեության ապահովման ֆունկցիայի հետ է կապվում ազգային անվտանգություն (ԱԱ) ինստիտուտը:

Ազգային զարգացման հիմնախնդրի նկատմամբ նման մոտեցումն առաջին անգամ իր հստակ իրավական ձևակերպումն է ստացել ԱՄՆ-ում՝ 1947թ. ընդունված «Ազգային անվտանգության մասին օրենքում»:

Ըստ էության, այդ օրենքը հանդիսանում է գործադիր իշխանության համակարգում երկու՝ ընթացիկ և ռազմավարական մակարդակների (ուրվագծերի) առկայության անհրաժեշտության իրավական և գաղափարախոսական հիմք:

Այդ օրենքի ոչ պակաս կարևոր բովանդակային բաղադրատարր է ԱԱ որպես անվտանգության գաղափարախոսական (հոգևոր, հոգեբանական), տնտեսական (ներառյալ տեխնիկա-տեղեկատվական, էկոլոգիական), արտաքին քաղաքականության, ռազմական, էլեմենտների համակարգի մասին պատկերացումը:

Անվտանգության այդ տարրերից յուրաքանչյուրը, որպես կանոն, իրավական ձևակերպում է ստանում իշխանության բարձրագույն մարմինների կողմից հաստատվող համապատասխան դոկտրինաների ձևով:

Այսպիսով ձևավորվում է ԱԱ երկաստիճան իրավական դաշտ: Վերին մակարդակում հասարակական զարգացման մեջ ԱԱ դերի և նրա համակարգային բնույթի մասին օրենքն է, ստորինում՝ ԱԱ բաղադրատարրերի հետ կապված դոկտրինաները:

Անվտանգության համակարգն արտահայտող դոկտրինաների համակարգերի նշանակությունը ինքնակազմակերպման գործընթացի (որակական զարգացման) ապահովումն է, որի մասին նշվեց նախորդ բաժնում:

ԱԱ գաղափարախոսության իրականացման ինստիտուցիոնալ սխեման ենթադրում է.

- Ազգային անվտանգության նախարարության կազմում գաղափարախոսական, տնտեսական (ներառյալ կազմակերպչական, տեխնիկա-տեղեկատվական), քաղաքական-իրավական (ներառյալ Հայաստանում սուբյեկտների իրավունքները), ռազմավարական (արտաքին քաղաքա-

կան) և ռազմական անվտանգության գծով մասնագիտացված ստորաբաժանումների առանձնացումը:

- Պետական ապարատի բոլոր կարևոր կառույցներում համանման ստորաբաժանումների ստեղծումը, որոնց ֆունկցիաները կորելացված են ազգային անվտանգության նախարարության համապատասխան ֆունկցիաների հետ:

- Անվտանգության մեկ ենթահամակարգի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների համատեղ գործունեության պատասխանատվության սահմանումը միաժամանակ նաև ԱԱ խորհրդի անդամ հանդիսացող պետնախարարի համար:

- ԱԱ նախարարության ստորաբաժանումները պետք է ունենան երկակի ենթակայություն՝ ըստ ֆունկցիաների՝ պետնախարարին, ըստ օպերատիվ աշխատանքի՝ ԱԱ-ի նախարարին:

- ԱԱ խորհուրդը նախագահի գլխավորությամբ պետք է դառնա երկրի առաջատար ռազմավարական մարմինը:

## **1. Գաղափարախոսական անվտանգությունը (հոգևոր, հոգեբանական) որպես որակական զարգացման ապահովման կարևոր պայման**

Այժմ գաղափարախոսական անվտանգության ենթահամակարգի առաջ կանգնած են երկու կարևոր խնդիրներ.

- սոցիալական (անհատից մինչև ազգ) սուբյեկտներին զարգացման ներքուստ բնորոշ ռազմավարությունից շեղող արտաքին ազդեցություններից ազգային հոգևոր-բարոյական դաշտի պաշտպանումը,

- զարգացման նոր որակի անցման համար հոգևոր-հոգեբանական կողմնորոշման ձևավորման գործընթացի ապահովումը,

Առաջին խնդրի հրատապությունն անշեղորեն աճեց համաշխարհային ինֆորմացիոն տարածության և նրա նկատմամբ անհսկելի մատչելիության ձևավորումից հետո:

Ինֆորմացիոն-հոգեբանական փոխազդեցության պատմականորեն առաջին գաղափարախոսը եղել է ֆաշիստական երմանիայում գաղափարախոսության գծով նախարար Էբելսը: Ըստ նրա պլանի, ծավալվեց ար-

տասահմանի հետ «Կոնկորդիա» ռադիկալային հաղորդումների ցանց, նպատակ ունենալով ունկնդրին վերածել «մեքենայացվող մարդու»:

Այսօր այդպիսի ներազդեցության հնարավորությունն անսահմանորեն աճել է:

Ինչպես գրում է ինֆորմացիոն-հոգեբանական ազդեցության գծով ամերիկյան մասնագետ Ռիչարդ Շաֆրանսկին. «Տեղեկատվական պատերազմը ներազդեցություն է հակառակորդի կամքի և գիտակցության վրա»: Ընդ որում հակառակորդը չպետք է դա գիտակցի: «Սուզգեստիան» ինֆորմացիայի հաղորդումն է գիտակցության և քննականության նվազման ֆոնի վրա:

Ինֆորմացիան որպես ինֆրակառուցվածք ինտեգրալ է, միաժամանակ հնարավորություն է տալիս անհատին գործել ավտոմոմ՝ «հասարակության ավտոմոմիզացիա»:

Այդ գործընթացը կարող է ուղեկցվել «վիրտուալիզացիայով» (իրողությունից հեռացումով) և «ավիտալիզմով» (կենսապահովման կողմնորոշիչների կորստով):

Արտասահմանյան հոգեբանների գնահատմամբ, հասուն բնակչության միայն 15-20%-ն ընդունակ ինֆորմացիայի քննական յուրացմանը: Հատկապես ներշնչվող են երեխաները:

Ըստ արտասահմանյան փորձագետների միասնական կարծիքի, պատերազմ համարվող հարաբերությունների կառուցվածքում զուտ ռազմական տարրը անշեղորեն նահանջում է, և դա երկարաժամկետ միտում է:

Այդ նպատակի համար օգտագործվում են կեղծ և իրական փաստերի խեղաթյուրման կոմբինացիաներ, երկրի ղեկավարներին վարկաբեկելու նպատակով կանոնավոր կերպով ստեղծում են նպատակամետ ստերեոտիպներ, ազգային պետականության գաղափարի թերարժեքության ստերեոտիպներ:

Այդ նպատակներին հասնելու համար հատուկ դեր են խաղում ներյուրինգվիմիստական ծրագրավորման մեթոդները, որոնց գիտական բազան, արագ ընդարձակվում է շնորհիվ ինտենսիվ ֆինանսավորման:

Հեռուստատեսային և ռադիո եթերներում տեղեկության հաղորդման ժամանակ լայնորեն օգտագործվում է փաստերի տարանջատման եղանակը, երբ հաղորդվում են համակարգային ընդհանրացման չենթարկվող առանձին ընդգծված իրադարձություններ:

Ինֆորմացիոն-հոգեբանական ներազդեցության խնդրի հրատապու-

թյունը դրսևորվեց, մասնավորապես 1998թ. ԱՄՆ-ի Ձիմվորական քոլեջում «Ինֆորմացիոն պատերազմի վերաբերյալ ցուցումների» հրատարակման փաստով:

Ինֆորմացիոն-հոգեբանական պատերազմում փոխազդեցության վտանգ է նաև այն, որ այսօր այդ գործընթացը դուրս է գալիս զուտ պետական կիրառության սահմաններից և կիրառվում է անհատների ու կազմակերպությունների մակարդակով:

Ինֆորմացիոն-հոգեբանական ներազդեցության մեթոդները, ըստ ազդեցության ծավալների, արդեն կարելի է համեմատել զանգվածային բնաջնջման զենքի հետ:

Ինֆորմացիոն-հոգեբանական ներազդեցության առավել արդյունավետ մեթոդներն ուղղվում են ենթագիտակցական մակարդակի վրա ընկալման պատճենների վերացմանը:

Այդ մեթոդների օգտագործման վերջնական նպատակն ինչպես առանձին անհատի, այնպես էլ ժողովրդի հունանիտար ստրկացումն է:

Ինստիտուցիոնալ մակարդակով հակադրման միջոցներից մեկը ՁԼՄ-ների՝ որպես 4-րդ իշխանություն, իրավական կարգավիճակն է, որից էլ բխում են աշխատակիցների մասնագիտական մակարդակի և պատասխանատվության վերաբերյալ ներկայացվող պահանջները:

ԱՄ-ի գաղափարախոսական ենթահամակարգի 1-ի խնդրի արմատական լուծումը կապված է 2-րդ խնդրի հետ:

Այդ խնդիրը կապված է ազգային հունանիտար համալիրի մակարդակի հետ, որի մասին խոսվել է աշխատանքի նախորդ բաժնում:

Անհրաժեշտ է պարզորոշ գիտակցել, որ միայն գործող հոգևոր-բարոյական դաշտի առկայության դեպքում է հնարավոր արմատապես լուծել հասարակականի հետ առանձին տնտեսական օղակների շահերի համադրման հիմնախնդիրը: Այդ խնդիրը բացառապես տնտեսական մեթոդներով լուծելու փորձերը դասվում են տնտեսական ռոմանտիզմի դարաշրջանին, որից ամբողջ քաղաքակիրթ աշխարհը վաղուց հրաժարվել է: Հետևաբար, պետական տնտեսական օրենքները պետք է կողմնորոշվեն և հիմնվեն տնտեսավարող սուբյեկտների համար համոզիչ բարոյական դաշտի վրա:

Տնտեսավարման հոգեբանությունն ազգային մշակույթի և ազգի մենտալիտետի մասն է:

Պահանջվող հոգեբանական ֆոնի ստեղծումը պետական գաղափարախոսական քաղաքականության կարևորագույն մասն է: Այդ գործոնի չզի-

տակցումն և թերագնահատումն են մեծապես նպաստել այսօրվա ճգնաժամի ձևավորմանն ու խորացմանը:

ԱՄՆ-ում տնտեսական գործունեությունը հոգեբանորեն հիմնվում է ուժեղ (հույսը իր վրա դնող) անհատի՝ «կոլբոյի», անձնական կերպարի վրա: Որժարարի եվրոպական չափանիշը ազնիվ, պարտաճանաչ, ճշտապահ ու խնայողական աշխատավորն է: Ճապոնիայում ձեռնարկատիրական գործունեությունը հիմնվում է «Բուսիդո» զինվորի սամուրայական կոդեքսի վրա:

ՀՀ-ում պետական իշխանությունը կանգնած է ձեռներեցի էտիկայի առավել արագ ձևավորման և տնտեսական գործունեության մեջ գործնական արմատավորման անհրաժեշտության առաջ: Այդպիսի էտիկայի կարևորագույն բաղկացուցիչներն են.

- պայմանագրի պահպանման համար խիստ պատասխանատվությունը,
- տնտեսական ակտիվությունը,
- ակտիվ կենսական դիրքորոշումը:

Այս իմաստով կարևոր գործոն է հեղինակային, ձեռներեցների ընտրախավային ակունքների ստեղծումը, որոնցում անդամությունը որոշվում է ոչ այնքան գործունեության ծավալներով, որքան վերոհիշյալ բաղկացուցիչների տեսանկյունից այդ գործունեության որակական առաջանցիկությամբ: Անհրաժեշտ է նախատեսել հեղինակային պետական պարգևներ տնտեսական զարգացման մեջ ներդրումների և ստեղծագործական-հոգեբանական մթնոլորտի ձևավորման համար:

Այդ իմաստով առավել կարևոր ձեռներեցները պետք է մեծարվեն ամենաառաջավոր քաղաքական գործիչների հետ մեկտեղ:

Ինքը պետությունն է կանգնած սոցիալ-քաղաքական գործունեության ընդհանուր պետական քաղաքականության մաս հանդիսացող գործընկերության քաղաքականության հունով ձեռներեցների հետ իր հարաբերությունների արմատական բարելավման անհրաժեշտության առջև: Այդ իմաստով անհրաժեշտ է ստեղծել որոշումների ընդունման, բոլոր շահագրգիռ կողմերի ինքնաբերական ներգրավում ապահովող ինֆորմացիոն համակարգեր: Հանձնիս դատական իշխանության պետությունը պետք է վերականգնի արդարացի դատավորի և պաշտպանի իր ֆունկցիաները, այդ թվում նաև պետության հետ վեճերում:

Ներկայումս պետությունն իրեն դրսևորում է անարդար և ուժեղ սուբյեկտի դերում, ոչ սիմետրիկ ձևով կիրառում է իշխանության իր մենաշնորհա-

յին իրավունքը՝ ամեն գնով կորզում է հարկեր՝ միևնույն ժամանակ չկատարալով իր պարտավորությունները: Այս իմաստով պետությունն ինքն է խախտում պետականության հիմքերը:

Հասարակական կյանքում սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքի հետևողական տարածումը շատ կարևոր է զարգացման այնպիսի հզոր գործոնի տեսանկյունից, ինչպիսին վստահության մակարդակն է հասարակության մեջ:

Այդ գործոնի նշանակալիության վերլուծությունը տրվում է ամերիկացի տնտեսագետ Ֆուկույամայի աշխատություններում: Չարգացման դինամիկայի առումով, տնտեսական համակարգը դեռևս դասականների ժամանակներից ընդունված է դիտարկել որպես պատճառա-հետևանքային կախվածություն արտադրության գործոնների՝ աշխատանքի, հողի, կապիտալի և համախառն ներքին արդյունքի միջև:

Հետագայում նշված գործոններին ավելացավ նաև ձեռնարկատիրության (կազմակերպման և մենեջմենթի) գործոնը: Ինստիտուցիոնալիստները կողմնակիցները պնդում են, որ հասարակական-քաղաքական զարգացումը իշխանության հաջորդական անցումն է մեկ գործոնի տիրապետողներից մյուսներին «հող-կապիտալ-կազմակերպում» շղթայով: Այստեղից բխում են «մենեջերների հեղափոխության» մեկնաբանությունը որպես իշխանության անցում «ձեռնարկատիրական» գործոնի տիրապետողներին և կոնվերգենցիայի տեսությունը, որի իմաստն այդ անցման օբյեկտիվ անխուսափելիության մեջ է անկախ հասարակական համակարգի մեկնարկային վիճակից: Գործոնների շղթան որոշում է ոչ միայն հասարակական համակարգերի փոփոխման պատմական տրամաբանությունը, այլև յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում գործոնների ստորակարգումը: Դա նշանակում է, որ գործոնի ազդեցության արդյունավետությունը սահմանափակվում է հիերարխիայում ավելի բարձր գործոնների ազդեցությամբ:

Այդ շղթային Ֆուկույաման ավելացրեց ևս մեկ գործոն՝ հասարակության մեջ վստահության մակարդակը: Վերջինս որոշվում է ինչպես ուղղահայաց՝ պետության նկատմամբ, այնպես էլ հորիզոնական՝ միմյանց նկատմամբ: Ըստ Ֆուկույամայի, վստահության ցածր մակարդակը համարժեք է լրացուցիչ անուղղակի հարկի, քանի որ պահանջում են լրացուցիչ մարդկային-տեխնիկական ռեսուրսների օգտագործում իրավաբանական, ապահովագրական, բյուրոկրատական և այլ ոլորտներում: Դրա հետևանքով դան-

դադում է «որոշումների ընդունում-իրագործում» գործընթացի արագությունը:

Առավել նշանակալի այս գործոնի չափը՝ վստահության մակարդակը, միաժամանակ հանդես է գալիս և որպես պետական իշխանության արդյունավետության ցուցանիշ, և որպես սահմանափակող հանգամանք:

Այդ հանգամանքի շրջանցումով կամ չգիտակցումով է բացատրվում անպատասխանատու կոնյունկտուրային որոշումների ընդունումը, որոնցից յուրաքանչյուրը նվազեցնում է հասարակության մեջ վստահության մակարդակը: Հասարակության մեջ հեղափոխական իրավիճակն արտահայտում է վստահության գործոնի նվազումը որոշակի եզրային մակարդակից, որից հետո վերանում են նաև էվոլյուցիոն զարգացման հնարավորությունները:

Ներկայումս հասարակության մեջ այդ գործոնի կրճատման հնարավոր չափերը սպառված են: Դա նշանակում է, որ կառավարության որոշումները պետք է տանեն միայն դրա ավելացմանը, հակառակ դեպքում անխուսափելի են կամ հասարակության լրիվ կազմալուծումը կամ էլ՝ սոցիալական պայթյունը:

Հունամիտար համալիրը, հանձինս նշված երեք ինստիտուտների, պետք է կապող օղակ դառնա ազգային անվտանգության համակարգի և կադրային քաղաքականության միջև պետական ապարատի ու սպայական կորպուսի աշխատողների պատրաստման ոլորտներում:

Քաղաքական կոլտուրայի անբավարար մակարդակի պատճառով կանոնավոր կերպով շփոթվում են քաղաքական ու գաղափարախոսական չեզոքության հասկացությունները:

Քաղաքական չեզոքությունը, որը հասկացվում է որպես չինովնիկների ու սպայական մի ոչ մասնակցություն քաղաքական շարժումների մեջ, ինքնին օբյեկտիվ և ճիշտ սկզբունք է: Սակայն ճիշտ նույնպես գաղափարախոսական չեզոքությունը, այն է՝ կայուն ազգային-հայրենասիրական համոզմունքների բացակայությունը, ամբողջությամբ արևելք է:

Այդ պատճառով էլ այդ ինստիտուտների խիստ հսկողության տակ պետք է գտնվի պետական ծառայողների և սպայական մի գաղափարական պատրաստման այսօր գործող դպրոցը: Այդ սկզբունքն իր արտացոլումը պետք է գտնի «Պետական ծառայողի մասին օրենքում»:

## 2. Տնտեսական անվտանգությունը (ՏԱ)

### 2.1 Տնտեսական ապագա կառուցվածքի հիմնական հատկանիշները

ՏԱ-ը կարևորագույն ենթահամակարգ է, որը պատասխանատու է ազգի ինքնակազմակերպման գործընթացի նյութականացման համար:

Ըստ ժամանակակից սիներգետիկ մոտեցման տնտեսությունը դա տնտեսական գործունեություն է, որն ապագայի հնարավորությունները կապում է ներկայի ռեսուրսների հետ:

Ըստ սիներգետիկ մոտեցման, կառավարման որոշումները պետք է խստիվ տարբերակվեն՝ կախված այն բանից, թե ազգային համակարգն ընդհանրապես, և տնտեսությունը՝ մասնավորապես, գտնվում են արդյոք հնարավոր որակապես այլ մոդելի անցման անհրաժեշտության վիճակում (բիֆուրկացիայի կետ), թե ոչ:

Ջարգացման ռազմավարության տեսակետից դա նշանակում է, որ կառավարող համակարգը ամենից առաջ պետք է կողմնորոշվի կազմակերպման և ինքնակազմակերպման գործընթացների միջև, այսինքն պետք է պարզել, թե արդյոք անհրաժեշտ է պարզապես բարելավել գոյություն ունեցող մոդելը (կազմակերպումը), թե իրավիճակը պահանջում է անցնել որակապես այլ մոդելի:

Պատասխանի համար անհրաժեշտ է բացահայտել, թե գոյություն ունեցող բացասական երևույթներն արտահայտում են ընտրված մոդելի մասնակի անկատարությունը, թե՞ ամբողջությամբ մոդելի անգործունեությունը:

Դժբախտաբար (կամ էլ բարեբախտաբար) գոյություն չունեն նման հարցերի պատասխանի ֆորմալ մեթոդներ:

Հավանաբար հենց դրանով է բացատրվում սոցիալական համակարգերի զարգացման նկարագրությանն ուղղված ցանկացած տեսական մոտեցման թերությունը:

Մեր կարծիքով, Հայաստանի ներկայիս հասարակական կյանքում առկա քառսի մակարդակը հիմք է տալիս ենթադրելու, որ համակարգը գտնվում է բիֆուրկացիայի կետի շրջակայքում:

Ելնելով այդ դրույթից, անհրաժեշտ է որոշել ապագայի մոդելի


կարևորագույն հատկանիշները:

Արևմուտքի ժամանակակից մոդելներում որպես հետարդյունաբերական (ինֆորմացիոն) հասարակության հիմնական հատկանիշ հանդես է գալիս գիտելիքների մակարդակը: Դրանք այնպիսի հասարակություններ են, որտեղ գիտակրթական համալիրը զարգացման գլխավոր շարժիչ ուժն է:

Խոտության շրջանակներում կարելի է առանձնացնել առաջատար այնպիսի ուղղություններ, որոնց հետ ուղիղ և հակադարձ կապերը զարգացում են սիներգետիկան որպես նոր մետագիտություն:

Դրանք են ֆիզիկան, նեյրոֆիզիոլոգիան, հոգեբանությունը, լեզվաբանությունը:

Ըստ էության, ձևավորվում է գիտության զարգացման հետևյալ մոդելը (նկ. 2).



Նկ. 2 Գիտության զարգացման մոդելը

Բերված սխեման կարող է դիտվել որպես բազային՝ գիտության ազգային մոդելի ստեղծման համար:

Այսինքն՝ Հայաստանում պետական աջակցությամբ նշված ուղղություններով պետք է ստեղծվեն գիտական դպրոցներ: Միաժամանակ, հաշվի առնելով ձևավորված միտումը, անհրաժեշտ է ապահովել նրանց հետ ինստիտուցիոնալ ձևակերպված ուղիղ և հակադարձ կապերի սիներգետիկ ընդհանրացումը:

Բերված դատողությունները նպատակ ունեն հիմնավորել այն փաստարկը, որ գիտության և կրթության՝ որպես գլխավոր շարժիչ ուժի վրա կողմնորոշումը 21-րդ դարի անհրաժեշտ այցետոմսն է:

Եթե այդ փաստարկներին ավելացվի բավականաչափ մեծ քանակությամբ աշխատատեղերի ստեղծման գործում Հայաստանին բնորոշ տրանսպորտային հաղորդակցության և տարածքի սահմանափակության հիմնախնդիրները, ապա ակնհայտ է դառնում, որ Հայաստանի համար ուրիշ այլընտրանք գոյություն չունի:

Այլ խոսքով Հայաստանի համար գերակշռող համաշխարհային միտումը դառնում է գոյատևման խնդիր:

Շատ ուշագրավ է այն փաստը, որ այսօր բացի գիտականի, մշակութային գործունեությունը նույնպես դառնում է առավել շահութաբեր տնտեսական ճյուղերից մեկը: Որպես օրինակ կարելի է բերել հանրահայտ իռլանդական պարային համույթը, բարձրակարգ սիմֆոնիկ նվագախմբերը, որոնց ստեղծագործություններն իրացվում են մեծ ծավալներով:

Իտությունը և մշակույթն անուղղակիորեն միշտ հանդես են եկել որպես ազգային և համաշխարհային առաջընթացի ֆունդամենտալ հիմք:

Սակայն խոսքը այն մասին է, որ ժամանակի վերջին հատվածում նրանք դարձել են ոչ միայն ուղղակիորեն, անմիջականորեն շահութաբեր, այլև անխուսափելիորեն տեղափոխվում են առաջատարների շարքերը:

Հայաստանի համար ոչ միայն գիտությունը, այլև ոչ պակաս չափով մշակույթը համարվում է զարգացման պոտենցիալ կարևորագույն ռեսուրս:

Ընդ որում, այդ մշակութային ռեսուրսը կարող է ընդգրկել լայն ընտրանի՝ սկսած ձեռքի աշխատանքներից, որոնք, մասնավորապես, ներկայացված են վերնիսաժում, մինչև արվեստի ցանկացած ոլորտում մասնագիտացած գեղարվեստական խմբերը:

Նշված փաստը շատ խորհրդանշական է, քանի որ գիտությունը և մշակույթը հանդես են գալիս գիտություն-կրոն-արվեստ եռանկյան երկու գագաթները, որոնց ներդաշնակ միասնությունը և զարգացումը անհրաժեշտ պայման է հանդիսանում դեպի հոգևորի վրա հիմնվող հասարակության մոդելին անցման համար:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է արմատապես վերանայել Հայաստանի տնտեսական զարգացման հայեցակարգը:

Ջարգացման ճիշտ ընտրված հայեցակարգը պետք է միաժամանակ լինի տարածաշրջանային և համաշխարհային միությունների մեջ ազգային համակարգի տեղի վերաբերյալ հարցի պատասխանը՝ հատկապես արդիական համաշխարհայնացման գործընթացի ինտենսիվացման համատեքստում:

## 2.2 Պետական տնտեսական քաղաքականությունը

Պետական տնտեսական քաղաքականությունը, ազգային տնտեսական համակարգի բիֆուրկացիոն կետի (դեպի որակապես այլ վիճակի հնարավոր անցման կետ) մերձակայքում գտնվելու ենթադրության պարագայում, պետք է կառուցվի սկզբունքորեն այլ հիմքերի վրա:

Բիֆուրկացիոն կետից բավարար հեռավորության դեպքում մակրոտնտեսական քաղաքականության հայեցակարգը կողմնորոշվում է մակրոտնտեսական ցուցանիշների՝ առավել հարթ փոփոխման հետագծի երկայնքով պահպանման վրա:

Գործառնական իմաստով կոնկրետ տնտեսական որոշումները պետք է բավարարեն հավասարակշիռ հետագծից մակրոտնտեսական ցուցանիշների շեղման նվազագույն ռիսկի չափանիշին:

Բիֆուրկացիայի դեպքում ռիսկի նվազեցմանն ուղղված հավասարակիռ տնտեսական քաղաքականությունը բերում է համակարգի հակառակ ռեակցիայի. արտաքնապես կայուն մակրոցուցանիշների հետևում աճում է «ստվերային» տնտեսությունը, որոշակի տնտեսական ոլորտներում ձևավորվում է պետական ապարատի վերամասի հովանավորությունը, որը հանգեցնում է այդ ոլորտներում արհեստական մեմաշնորհների ստեղծմանը և կլանում է բնակչության եկամուտները: Արդյունքում կտ-



րուկ աճում է բնակչության եկամուտների բևեռացումը, նվազում է համախառն պահանջարկը և դադարում է կատարել առաջարկի խթանման իր դերը: Ներքին շուկայի տարողունակությունը մնում է ծայրահեղ ցածր, խախտվում է վերարտադրության ցիկլի, այդ թվում՝ ֆինանսական և իրավական հատվածների կապվածությունը: Վերը նշվածի արդյունքում ձևավորվում է տնտեսության այլասերված ռեժիմ:

Բիֆուրկացիոն վիճակում (կետում) պետական տնտեսական քաղաքականության օրինակ կարող են ծառայել տնտեսական հրաշքին հասնելու բոլոր դեպքերը: Դրանցից առանձնացվում է Հարավային Կորեայի օրինակը՝ 1950-1990թթ. ընթացքում ՀՆԱ-ն աճել է 120 անգամ:

Այնտեղ հատուկ օրենքներով առանձնացվել են զարգացման 7 առավել գերակայության ուղղությունները: Այդ ուղղություններին պատկանող ֆիրմաները օգտվում էին հարկային, մաքսային, վարկային արտոնություններից: Պետական խստագույն հսկողության տակ էին գտնվում դրանց ներֆիրմային ծախսերը: Առաջատար ֆիրմաների համար սահմանվում էին կողմնորոշող խնդիրներ և իրագործվում էր նրանց կատարման ընթացիկ մոնիտորինգը: Բանկային համակարգերի խիստ հսկողության միջոցով զգալիորեն բարձրացավ ներդրումային գործընթացի կառավարելիությունը: ՀՆԱ-ի 15%, 32%, 39%, 46%: Վարկերի տոկոսադրույքը հաշվի էր առնում սղաճի տեմպերը և հաշվարկային շահութաբերությունը: Ընդհանուր ներդրումների մեջ արտաքին միջոցներով ֆինանսավորվող ներդրումները 3-4 անգամ գերազանցում էին ներքին ներդրումներին: Ընդ որում պետությունը խրախուսում էր միայն այն օտարերկրյա ներդրումները, որոնք ընթանում էին արդյունաբերական քաղաքականության հունով:

Սիներգետիկ տնտեսագիտության տեկանկյունից պետական տնտեսական քաղաքականությունը պետք է կողմնորոշվի դեպի զարգացման ընտրած մոդելին անցումն ապահովող գործընթացների ձևավորման և առավելագույն խրախուսման վրա:

Մասնավորապես, ելնելով Սխեմա 2-ից, բանկային համակարգը (ԲՀ) պետք է կողմնորոշվի գիտա-տեղեկատվական ծառայությունների շուկայի ստեղծման մեջ առավելագույն մասնակցության վրա:

Բնականաբար, այդ դեպքում կառավարությունը պետք է ձեռնարկի հետևողական քայլեր գիտության և կրթության անընդհատ զարգացման

համար, առաջին հերթին՝ գերակայության ուղղությունների գծով:

Հարկային քաղաքականությունը պետք է լինի դիֆերենցված՝ հասարակական համակարգի նոր մոդելներին անցման առաջադրված ռազմավարական խնդիրներին համապատասխան:

Ինստիտուցիոնալ փոփոխություններ պետք է տեղի ունենան նաև ԲՀ-ում, որտեղ պետք է առանձնացվի գիտա-տեղեկատվական ծառայությունների շուկաների ստեղծման քաղաքականությունը գիտակցաբար հետևող բանկերի գործընկերային միջուկ:

Ընդ որում Կենտրոնական բանկ (ԿԲ) - գործընկերային միջուկ հարաբերությունները պետք է տարբերվեն այլ բանկերի հետ ԿԲ-ի հարաբերություններից:

### 2.3 SU-ի ինստիտուցիոնալ ասպեկտները

#### Արդյունավետ սեփականատիրոջ հիմնախնդիրները

Արտասահմանյան փորձագետների գնահատմամբ, պետական ազդեցության մակարդակը մասնավոր հատվածում ընդունվող որոշումների վրա արդեն մոտենում է 50%-ին, այսինքն պետությունը անուղղակիորեն հանդես է գալիս իրավահավասար գործընկեր մասնավոր սեփականության կառավարման մեջ:

Բերված գնահատականը համարվում է հասարակական շահերի հետ մասնավոր հատվածի որոշումների համաձայնեցման ընդհանուր կոշտ միտման հետևանք:

Ժամանակակից տնտեսության արդյունավետությունը կախված է ոչ թե սեփականության ձևերից, այլ նրանց գործունեության կազմակերպչա-իրավական «թաղանթից»: Պետական տնտեսական քաղաքականության ձևավորման նման մոտեցումը առաջին անգամ ձևակերպել է «Ճապոնական հրաշքի» հեղինակներից մեկը՝ Սաբուրո Օկիտան:

Հայաստանի համար առավել հրատապ է հիմնական ֆոնդերի հասարակակայնորեն արդյունավետ շահագործման համար պետության և սեփականատերի փոխադարձ պատասխանատվության ինստիտուտի ստեղծումը:

Արևմուտքի զարգացած երկրներում տնտեսական և բարոյական մի-

ջավայրը հանգեցրել է նրան, որ միջին և խոշոր ֆիրմաները հանրակրթական և այլ հունամիտար ծրագրերի վրա ծախսում են իրենց եկամուտների մինչև 30%-ը:

Այդ ինստիտուտի գլխավոր ֆունկցիան արդյունավետ սեփականատիրոջ (այսինքն՝ Հայաստանում երկարաժամկետ ռազմավարական շահեր ունեցող սեփականատիրոջ) ստեղծումն է:

Պետության կողմից հսկողության պարամետրերի դերում պետք է հանդես գան արտադրանքի թողարկման թույլատրելի ստորին սահմանը և կապիտալ ներդրումների միջին մակարդակը: Ընդ որում, առաջին պարամետրի նվազեցումը թույլատրելի սահմանագծից ցածր թույլատրվում է միայն տեխնիկական արդիականացում իրականացնելու կամ էլ վերակառուցման դեպքում, որն արտահայտվում է երկրորդ պարամետրի համապատասխան աճով:

Պետք է ձևավորվեն կազմակերպչական և իրավական մեխանիզմները, որոնց գործունեությունը ապահովում է հիմնական ֆոնդերի անարդյունավետ օգտագործումը ցուցաբերած սեփականատիրոջ կամավոր-հարկադրական փոխարինումը:

### **Հսկողությունը գործունեության իրական ծախսերի վրա**

Բոլոր «նորմալ» երկրներում պետական տնտեսական մարմինները մանրամասն վերլուծում են ձեռներեցի տրանսակցիոն ծախսերը վերարտադրության ցիկլի բոլոր կետերում: Այդ ծախսերի՝ որոշակի սահմանաչափի (եկամուտի 30-40%) գերազանցումը համարվում է օպերատիվ միջամտության ազդանշան:

Հենց ՀՀ-ում տրանսակցիոն ծախսերի նշված սահմանաչափից նշանակալի գերազանցումը հանգեցրել է նրան, որ ձեռներեցությունը որպես պարտադիր պայման հիմնվում է ռեկետի բոլոր ձևերից պաշտպանող, ինչպես նաև վարկերի և տեղեկատվության մատչելիությունը հեշտացնող ազդեցիկ պետական «տանիքների» վրա:

Ներկայումս յուրաքանչյուր տնտեսական նախարարության համար խիստ հրատապ խնդիր է հանդիսանում արտադրության իրական ծախսերի հսկողության և վերլուծության տեղեկատվական համակարգի ստեղծումը:

Տնտեսավարող սուբյեկտների գործառնական ծախսերի նշանակալի

մասն է գրավում հարկային համակարգը: Պետության նկատմամբ այն կատարում է երկու մրցակցող ֆունկցիա. ֆիսկալ (բյուջեի եկամտային մասը ապահովող) և խթանող: Երկրորդ ֆունկցիան ինչպես մակրո-, այնպես էլ միկրոմակարդակում պետական տնտեսական քաղաքականության իրականացման ինստիտուտն է:

Ընդունված է համարել, որ երկու ֆունկցիաների միջև հարաբերակցությունը կախված է զարգացման կոնկրետ փուլի առանձնահատկություններից: Սակայն, հաշվի առնելով զարգացման դինամիկայի և տնտեսական համակարգի հարկային բեռը կրելու հնարավորության պատճառահետևանքային կապը, գերակայությունը, անկասկած, պետք է տալ խթանող ֆունկցիային:

Այդ տեսակետից հարկային համակարգը պետք է բնութագրել, առաջին հերթին, բոլոր մակրոգործակալների նկատմամբ իր «ծանրության» տեսակետից: Այդ գործոնն արտահայտում է հարկային համակարգի որակը և, ըստ էության, համարվում է համալիր:

Առաջին հերթին դա ձեռներեցի եկամուտից գումարային պահումներն են (բեռը): Այստեղ անհրաժեշտ է անպայման նկատի ունենալ համաշխարհային փորձը՝ հարկային բեռի վրա ձեռներեցի վարքագծային ռեակցիայի ասպեկտում: Այդ փորձը վկայում է, որ կրիտիկական սահմանը, որից հետո ձեռներեցը կորցնում է շահագրգռվածությունը իր գործունեության արդյունքի հանդեպ, կազմում է ամբողջ եկամուտների 30-35%-ը: Բնական է, որ այդ թիվը կախված է երկրում իրավիճակի կանխատեսելիության մակարդակից (ռիսկի աստիճան) և դրա հետ կապված իրավական բարձիթողի իրավիճակից:

Փորձագիտականորեն ըստ երկրների գնահատվում է սովերային տնտեսության մեջ անցումը դրող ձեռներեցի վրա պաշտոնական ճնշման բոլոր ձևերի գումարային բեռի մակարդակը (%-ով ՀՆԱ-ից). Շվեդիա՝ 53, Երմանիա՝ 40, ԱՄՆ՝ 31, Իտալիա՝ 33, Անգլիա՝ 35, Ֆրանսիա՝ 38, ճապոնիա՝ 23:

«Բեռի» այլ բաղադրամասն է անուղղակի և ուղղակի հարկերի միջև հարաբերակցությունը: Անուղղակի հարկերը՝ ԱԱՀ-ի և ակցիզների տիպի, ավելացնում են գները և այդպիսով բարձրացնում անվանական (ընթացիկ գներով) համախառն ներքին արդյունքը: Բայց դրանց նման «ցանկալի» բնութագիրը զուգակցում է այն փաստով, որ նրանց բեռը կրում են ոչ

թե արտադրողները, այլ սպառողները: Հետևաբար, անուղղակի հարկերի ավելացումը ունի իր սահմանը, որից հետո կտրուկ նվազում է սպառողական պահանջարկը՝ դրանից բխող բոլոր հետևանքների հանդերձ:

Ջարգացած երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտների ընդհանուր գումարի մեջ մոտավորապես հավասար է 20%-ի, իսկ ուղղակի հարկերի (շահութահարկի) տեսակարար կշիռը՝ մոտ 25%: ՀՀ-ում 1998թ. անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է 55%, 1999թ.՝ 50%, 2000թ.՝ 55%, 2001թ.՝ 58%, 2002թ.՝ 59%:

«Բեռի» հասկացությունը ներառում է նաև հարկման մեխանիզմը, որը բնութագրում է ձեռներեցների, հարկային համակարգերի և ֆինանսների նախարարության շահերի համաձայնեցվածության աստիճանը (վերջիններս պետք է չփոթել պետության հետ): ՀՀ-ում ներկայումս գործող ապագա (հայտարարվող) եկամուտների հաշվով կանխավճարների հարկման պրակտիկան՝ դրան հաջորդող վերահաշվարկով, նպաստավոր պայմաններ է ստեղծում հարկային տեսչության, բայց ոչ ձեռներեցների համար:

Այստեղ պետք է ներառել նաև սոցիալական հատկացումների մակարդակը (ընդհանուր աշխատավարձի մոտ 30%-ը): Չնայած ֆորմալ ձևով այդ հատկացումները մտնում են ինքնարժեքի մեջ, իրականում դրանց դրսևորումը լրացուցիչ անուղղակի հարկի բնույթ է կրում, այսինքն քանկացնում է արտադրանքը: ՀՀ-ում սահմանափակ պահանջարկի և արտասահմանում կոշտ մրցակցության պայմաններում դա հանգեցնում է կամ ձևական հաշվետվության, կամ էլ՝ աշխատավարձի խիստ կրճատման:

Այս իրավիճակից դուրս գալու տարբերակ է հատուկ ֆոնդի ձևով այդ միջոցների զգալի մասի թողնելը հենց ձեռնարկության կառավարման տակ: Այդպիսի մոտեցումը համապատասխանում է կենսաթոշակային ապահովման եռաստիճան համակարգի համաշխարհային պրակտիկային:

Մեկ այլ բաղկացուցիչ մասն է նաև հարկերի հաշվարկման ժամանակ օգտագործվող հաշվապահական-հաշվետվական փաստաթղթերի վարման կարգը: Այսինքն, հաշվի է առնվում, թե ինչքանով է նա համապատասխանում տնտեսական գործունեությանը իրականությանը և որքան ազատ է մեկնաբանվում պետական հսկողության մարմինների կողմից:

Վերջապես շատ կարևոր գործոն է հանդիսանում բոլոր ձեռներեցների միջև հարկային բեռի արդարացի բաշխումը:

Հարկերի առումով ՀՀ տնտեսական համակարգը հանդիսանում է արտոնությունների գոտիներ մի քանիսի համար և արտոնությունների բացակայություն մնացածների համար (օլիգարխիկ իշխանության համակարգի առաջին հատկանիշը):

Վերոհիշյալ բոլոր գործոնները հանգեցնում են հարկերի հավաքածուի նվազմանը: ՌԴ-ում հարկերից խուսափումը կազմում է մոտ 50%, իսկ ԱՄՆ-ում՝ 15%: Կան բավարար հիմքեր ենթադրելու, որ ՀՀ-ում այդ ցուցանիշը մի քանի անգամ բարձր է: Օրինակ, միայն առևտրի ոլորտում կանխիկ գումարի մեծ մասը հաշվառումից դուրս է (ըստ Հայաստանի առևտրականների միության նախագահի տեղակալի կողմից 1996թ. ապրիլի 25-ի այդ միության համագումարում բերված տվյալների, Հայաստանում ներքին ապրանքաշրջանառության 60-70%-ը չի հարկվում): Ընդհանուր առմամբ տնտեսավարող սուբյեկտները շահագրգռված չեն իրենց հաշվետվություններում արտացոլել իրական շահութաբերությունը:

Վերոհիշյալը վերաբերվում է հարկային համակարգին՝ որպես մակրո-մակարդակում ամբողջ տնտեսական համակարգի կառավարման գործիք: Անտեսվում է այն փաստը, որ հարկային համակարգը համարվում է կառուցվածքային քաղաքականության հզոր լծակ: Արդյունքում նրա հնարավորությունները օգտագործվում են ոչ ամբողջությամբ, ոչ համալիր և ամարդյունավետ:

Դժբախտաբար, տնտեսական կառավարման համակարգում արդեն ձևավորվել է ուժերի նվազագույնի արատավոր հոգեբանություն՝ գնալ ամենափոքր դիմադրության ճանապարհով: Թույլ է գիտակցվում, որ ոչ ադեկվատ կառավարման արդյունքում հիմնախնդիրները սրվում են և հետագայում պահանջվելու են անհամեմատ ավելի շատ ջանք դրանց լուծման համար:

Հարկային համակարգերի կառուցվածքային օգտագործումը ենթադրում է հարկային դրույքաչափերի դիֆերենցում ըստ տնտեսության ճյուղերի, հատկապես ներքին շուկայի տարողունակությունը ավելացնող տեխնոլոգիական շղթաների կապող օղակներում: Չօգտագործված ամորտիզացիոն հատկացումները պետք է ներառվեն հարկային բազայի մեջ: Հարկերից պետք է ազատվեն պետական արդյունաբերական քաղա-

քականության մեջ ամրագրված ուղղություններով շահույթից իրականացվող ներդրումները: Միաժամանակ անհրաժեշտ է նախատեսել ԲՀ-ի արտոնյալ հարկումը՝ արդյունաբերական քաղաքականության ուղղություններով տրամադրված վարկերի գծով: Այնուհանդերձ, տնտեսական քաղաքականության հենց այդ բաղադրամասը (կառուցվածքային քաղաքականությունը - արդյունաբերական քաղաքականությունը) մինչ այժմ այդպես էլ չի ձևավորվել:

#### *2.4 Տնտեսական անվտանգության նորմատիվային պարամետրերը*

ՏԱ-ի քաղաքականությունը վերարտադրության ցիկլի նկատմամբ ունի երկու կարևոր ասպեկտներ.

- ինստիտուցիոնալ,
- պարամետրիկ:

Առաջինի էությունը՝ հասարակության զարգացումն ապահովող կարևորագույն ֆունկցիաների նկատմամբ պետական համակարգերի կառուցվածքային լիարժեքության մշտական վերլուծությունն է:

Այդ ասպեկտի իրականացումն ինքնին համարվում է հասարակական կարևորագույն ֆունկցիա և Արևմուտքում ստացել է «Ձարգացման պլանավորում» (development planning) անվանումը: Պլանավորման հասկացությունը արտահայտում է այն փաստը, որ այդ ֆունկցիան, որպես նպատակաուղղված զարգացման ինստիտուտ, համարվում է պլանավորման հիերարխիայի «բարձրագույն ձև»:

Երկրորդ ասպեկտը արտահայտում է պլանավորված խնդիրների նկատմամբ տնտեսական համակարգերի գործունեության «նորմալության» ռեժիմը:

Վերարտադրության ցիկլի թույլատրելիությունը արտահայտվում է ցուցանիշների համակարգով, որոնց սահմանագծային արժեքները որոշվում են տնտեսական համակարգերի ճգնաժամային իրավիճակը, որոնցից էլ սկսվում է համակարգի տարրալուծումը:

Ցուցանիշների այդ համակարգը կազմված է երկու խմբերից.

- համապարփակ՝ ստացված համաշխարհային փորձի ընդհանրացումից,

- առանձնահատուկ՝ կոնկրետ երկրի մասնագետների կողմից մշակված կոնկրետ միջնաժամկետ փուլի համար:

Ստորև կբերվեն միայն առաջին խմբի ցուցանիշները, քանի որ երկրորդ խմբի նկատմամբ այդպիսի խնդիր առայժմ չի առաջադրվել:

Առաջին առավել կարևոր ցուցանիշները կապված են զարգացման որակի հետ: Դրանց են պատկանում գիտության, կրթության և հումանիտար համալիրի (մշակույթի) ոլորտների բացարձակ և արժեքային ցուցանիշները:

Ձարգացած երկրներում փորձագետների գերակշռող մեծամասնությունը հանգում է նրան, որ գիտության մեջ զարգացման մշտական որակի ապահովման համար պետք է ներգրավված լինեն բոլոր զբաղվածների ոչ պակաս 30%-ը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն եզակի ինքնուրույն անհատներին, այլ նաև մտավոր գործունեության բոլոր կազմակերպչական ձևերին:

Գիտության գծով ծախսերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում կազմում է ճապոնիայում 3%, երմանիայում՝ 2,8%, ԱՄՆ-ում՝ 2,7%, Շվեդիայում՝ 2,6%, Ֆրանսիայում՝ 2,4%, ՌԴ-ում՝ 0,7%, ՀՀ-ում՝ 0,2%: Ընդունված տեսակետ է, որ 1%-ը համարվում է ստորին թույլատրելի սահմանագծային արժեք, որից ներքև տեղի է ունենում զարգացման որակի կորուստ:

Համախառն ազգային արդյունքում կրթության վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը կազմում է ԱՄՆ-ում 5,4%, երմանիայում՝ 4,8%, ճապոնիայում՝ 3,6%, Շվեդիայում՝ 8,3%, ՌԴ-ում՝ 4,1%, ՀՀ-ում՝ 2,2% (ցավոք, այստեղ որոշված չէ ստորին թույլատրելի սահմանը):

Ձարգացման որակի ցուցանիշ է հանդես գալիս նաև ՀՆԱ-ում գիտատար ճյուղերի տեսակարար կշիռը: Այստեղ նույնպես բացակայում է թույլատրելի սահմանագծային արժեքի փորձագիտական գնահատականը:

Ցուցանիշների այդ խմբին է պատկանում ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշիռը: Ընդլայնված վերարտադրության համար այն պետք է կազմի 25-30%, իսկ ինտենսիվ արագ զարգացումն արդեն պահանջվում է մոտավորապես 40%:

Վերարտադրության ցիկլի տեսակետից, որպես վճռական ցուցանիշներ, հանդես են գալիս իրական հատվածի յուրաքանչյուր առանձին ճյուղում ֆորմալ և ոչ ֆորմալ ծախսերի հանրագումարների ցուցանիշները:

Այդ թիվը չպետք է գերազանցի եկամուտների 30-35%-ը:

SU-ի ցուցանիշների մյուս կարևոր խումբը կապված է պարենային անվտանգության հասկացության հետ: Այդ հիմնախնդիրն ունի մի քանի բացասական ասպեկտներ.

- արտակարգ իրավիճակի դեպքում սովի վտանգը,
- շանտաժի հնարավորությունը և քաղաքական ճնշումը,
- ֆիզիոլոգիական ազդեցություն՝ ազգային առանձնահատկություններին ներմուծվող մթերքների միկրոկառուցվածքի անհամապատասխանության պատճառով,
- ֆիզիկական և հոգեկան առողջության վրա նպատակուղղված ազդեցության հնարավորությունը:

Ըստ SU-ի արտասահմանյան փորձագետների կարծիքի, պարենային ապրանքների ընդհանուր ծավալում ներմուծման թույլատրելի սահմանը կազմում է 20-25%-ը: Այսօր ՀՀ-ում այդ թիվը տատանվում է 40%-ից բարձր միջի սահմաններում:

Ակնհայտ է, որ այդ հիմնախնդիրն անհնար է լուծել առանց LՂՀ-ի և ազատագրված տարածքների ներուժի:

LՂՀ-ի և ազատագրված տարածքների հիմնախնդիրը սերտորեն կապված է SU-ի կարևորագույն մեկ այլ ասպեկտի՝ հաղորդակցության անվտանգության հետ:

Այդ ցուցանիշը որոշվում է ՀՀ-ի կողմից հսկվող կամ էլ գործընկեր երկրների տարածքներով անցնող հաղորդակցության թողունակությամբ:

Այդ թողունակությունը պետք է համադրելի լինի ապրանքաշրջանառության հեռանկարային ծավալների հետ (արտահանություն+ներմուծում):

Արտաքին միջավայրի ազդեցությունը (տնտեսական և մշակութային) պետք է սահմանափակվի ազգային համակարգի կողմից այն «մարսելու», յուրացնելու հնարավորությամբ, առանց ազգային շահերը վտանգի ենթարկելով:

Այստեղ պետք է լինեն ըստ տարբեր երկրների ապրանքաշրջանառության և ֆինանսական հոսքերի թույլատրելի սահմանային նորմատիվների դիֆերենցման համակարգ:

SU-ի կարևորագույն մաս է հանդիսանում բնակչության սոցիալական վիճակի ցուցանիշները: Այդ թվին են պատկանում կենսամակարդակի (մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը), սոցիալական շերտա-

վորման աստիճանի (10% ամենահարուստների եկամուտների հարաբերությունը 10% ամենաաղքատների եկամուտներին) ցուցանիշները:

SU-ի ցուցանիշների առանձին խումբ են կազմում ֆինանսական անվտանգության ցուցանիշները.

- արտաքին պարտքի չափը պետք է լինի այնպիսին, որպեսզի նրա սպասարկման վրա (մարման տոկոս + հիմնական պարտքի վճարումը) ծախսվի բոլոր տարադրամարտարժույթային մուտքերի որոշակի մասից ոչ ավելին (մոտավորապես 25%-ը),
- ներքին պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (վերջինիս մեջ մտնում է պարտքի բաց՝ վաճառված պետական արժեթղթերի ծավալը և փակ ձևերը՝ աշխատավարձերի և թոշակների գծով պարտքերը): ՌԴ-ում այդ ցուցանիշը : 30%-ից,
- ՀՆԱ-ում պետական բյուջեի պակասուրդի տեսակաարար կշռի վերի սահմանային մակարդակը,
- դոլարիզացիայի մակարդակը (կանխիկ դոլարային զանգվածի հարաբերությունը կանխիկի ընդհանուր զանգվածին):

## IV. Անկախության պահից անցած ճանապարհի քննադատական վերլուծություն

Հասարակական համակարգերի վարքագծերի ուսումնասիրության ժամանակակից մոտեցումը առանձնացնում է երկու գործընթաց. կազմակերպում՝ որն ընթանում է առանց համակարգի տարրերի միջև կապերի որակական փոփոխությունների և ինքնակազմակերպում՝ անցումը որակական այլ վիճակի:

Կազմակերպման գործընթացը բնութագրվում է համակարգի մուտքից (կառավարվող և արտաքին ազդեցություն) վերջինիս ելքի կայուն կախվածությամբ (համակարգի ֆունկցիայի հետ կապված ցուցանիշներ):

Կազմակերպման գործընթացը՝ համակարգի գծային զարգացման գոտին է:

Այդ իսկ պատճառով տվյալ գոտում համակարգը հեշտությամբ է ենթարկվում քանակական մեթոդներով ուսումնասիրության, իսկ սեփական փորձի օրինաչափությունների էկստրապոլյացիայի, կամ այլ համակարգերի փորձի տարածման վրա հիմնված եզրակացությունները, կարող են հանդիսանալ կոռեկտ:

Այլ պատկեր է նկատվում ինքնակազմակերպման գործընթացներում (ոչ գծային զարգացման գոտի): Այստեղ համակարգի մուտքի ու ելքի միջև կապի տեսակը ժամանակի միմյանց մոտ տարբեր պահերին կարող է կտրուկ փոխվել, քանի որ զգալիորեն փոխվում են համակարգի տարրերի միջև կապերը:

Նոր պետության զարգացումը, որպես կանոն, կապված է հենց ինքնակազմակերպման գործընթացի հետ:

Այն հանգամանքի գիտակցումը, որ կազմակերպման և ինքնակազմակերպման գործընթացները մշտապես հաջորդում են միմյանց, և ավելին, պատմության ներկայիս փուլը բնորոշվում է ինքնակազմակերպման գործընթացների գերակայությամբ, պայմանավորել է վերջիններիս ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրության և պահանջարկի աճը:

Հասարակական-քաղաքական համակարգերի զարգացման ասպեկտում, Հայաստանի անկախություն ձեռքբերման պահին կուտակվել էր «մոդերնիզացիայի» տեսություն անվանումը ստացած որոշակի տեսական փորձ՝ կապված զարգացող երկրների փորձի ընդհանրացման հետ:

Իսկ վերջին 30 տարիներին սկսել է բուռն տեմպերով զարգանալ նոր մետազիտական ուղղություն՝ սիներգետիկան (համակարգերի ինքնակառավարման տեսություն):

Վերոհիշյալը նպատակ ունի արձանագրել ինքնակազմակերպման գործընթացում ինստիտուցիոնալ վերակառուցման համակարգերի լուծման նկատմամբ մոտեցման որոշակի կուլտուրայի գոյությունը:

Ցավոք, Հայաստանի անկախության ձեռք բերման պահին այդ տեսական և գործնական բավականաչափ կուտակված փորձը մնաց չպահանջված:

Պատճառը հավանաբար հասարակության քաղաքականապես հասունության հստակ արտահայտված ոչ բավարար մակարդակն է: Այն արտահայտվում է ինստիտուցիոնալ ձևակերպում ստացած հասարակական խավի բացակայությամբ, որը հասարակության ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ կունենար իր համակարգված պատկերացումը:

Նմանատիպ ինստիտուտի առկայությունը հանդես է գալիս պետականության կարևորագույն ատրիբուտ, սակայն Հայաստանը, ինչպես և բոլոր միութենական հանրապետությունները, այդ իմաստով թերի էր:

Լիարժեք պետականության տիրապետում էր միայն համամիութենական կենտրոնը, որն էլ շահագրգռված չէր վերջինիս ձևավորման մեջ կայսրության առանձին մասերում:

Այժմ ՌԴ-ի պայմաններում պետականության այդ ինստիտուտի որոշակի կենսունակության պահպանումը բացատրում է ռուսական մամուլում բավական բարձր մակարդակով քննադատական և դրական հոդվածների երևան գալը:

Վերոհիշյալին համապատասխան, անցյալ փուլի հիմնական սխալները պայմանավորված էին որոշ պատկերացումների բացակայությամբ, մասնավորապես.

- հասարակության մոդելը, որին իրականացվում է անցումը: Այդ մոդելի փոխկախվածությունը զարգացման ունիվերսալ համամարդկային դոմինանտների հետ,
- հասարակության զարգացման կազմակերպման և ինքնակազմակերպման գործընթացն ապահովող ինստիտուտների համակարգ (պատկերացում չկար նույնիսկ այդ համակարգի ամբողջականության վերաբերյալ),

- հասարակության զարգացման ինստիտուտների ձևավորման հաջորդականություն,

- մարդկային գործոնի դերը: Ըստ «մոդերնիզացիայի» տեսության, անցումային փուլում պետության կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում ընտված հասարակական համակարգի մոդելին համապատասխան ընտրախավի նոր հիերարխիայի ստեղծումը:

Արդյունքում որպես նպատակային մոդել հանդես եկան արևմտյան հասարակական համակարգի վերաբերյալ պարզունակ և ասոցիատիվ պատկերացումները:

Առաջնահերթ քայլերը պետք է կապված լինեն անցման գործընթացի ընդհանուր շրջանակները սահմանող ինստիտուտների ստեղծման հետ.

- հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանն ուղղված պետության և սեփականատիրոջ փոխադարձ պատասխանատվության (էֆֆեկտիվ սեփականատեր) ինստիտուտ,

- տնտեսավարող սուբյեկտների գործունեության իրական ծաղրերի վերլուծության ինստիտուտ, տվյալ խնդրի ուղղությամբ տնտեսական նախարարությունների վերակողմնորոշման միջոցով,

- հանրապետական պետական-մասնավոր մարկետինգային կենտրոն, որը արտասահմանում Հայաստանի ներկայացուցչական տնտեսական ստորաբաժանումների հետ մեկտեղ կազմում է արտահանման ապրանքների միասնական մարկետինգային խթանման համակարգ,

- կառավարական որոշումների ընդունման ընթացքում սոցիալ-քաղաքական գործընկերության սկզբունքի հետևողական կիրառման ինստիտուտ:

Այդ ինստիտուտների բացակայությունը հանգեցրել է նրան, որ սեփականաշնորհման սկզբնական փուլում ձևավորվել է հոգեբանական ուղղվածություն, համաձայն որի վաճառվում է ոչ թե սեփականության իրավունքը (որպես շահագործման օբյեկտ), այլ վերջինիս վաճառքի իրավունքը:

Ցավոք, այն, ինչը պետք է արվեր ամենասկզբից, դեռևս չի արվել, չնայած որ դրա անհրաժեշտության գիտակցման աստիճանը զգալիորեն աճել է:

Դա մեծ մասամբ բացատրվում է նրանով, որ բավականաչափ ուշ գիտակցվեց այն հանգամանքը, որ հասարակական համակարգի նոր մոդել-

լին անցնելիս փոխվում է պետական իշխանության ոչ թե ծավալը (ինչպես պարզունակ հասկացվում էր սկզբում), այլ նրա ֆունկցիաները:

Նման մոտեցման (այժմյան փուլում լրիվ իրականացված) վտանգը կայանում էր նրանում, որ այն (մոտեցումը) ծառայեց որպես ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտ խնդիրների լուծումից խուսափելու, ինչպես նաև բիզնեսի բնագավառի և պետական ապարատի արագ սերտաճման գաղափարախոսական հիմք:

Արդյունքում պետությունը դադարում է կատարել իր գլխավոր առաքելությունը՝ լինել համազգային շահերի արտահայտողը:

Արհեստականորեն ստեղծված կլանային մենաշնորհային խմբերի հետ տնտեսությունը բաժանվեց մի շարք ոլորտների, որը հանգեցնում է եկամուտների վերաբաշխմանը և նրանց բևեռացման աճին:

Այդ դեպքում արդեն իշխանամետ բիզնեսի կառույցների ճնշման տակ ավելանում է պետական իշխանության ծավալը, որն էլ հանգեցնում է տնտեսական իշխանության համակենտրոնացմանը, տնտեսության բռնի հսկողությանը և արտատնտեսական մեթոդներով հարկադրմանը:

Իրական տնտեսական համակարգը դարձել է իշխանության ներկայացուցիչների հոգեբանական դիրքորոշման և առավելագույն շահավետ դիրք գրավելու նրանց ձգտման հետևանք: Իսկ քանի որ այդ ձգտումների իրականացման առավել կարևոր գործիքը պետական ապարատն է, ապա և՛ հնարավորին չափով նրա ենթարկումը:

Արդյունքում, օրինակ, սեփականաշնորհման գործընթացը բխում էր ոչ այնքան որոշակի սոցիալ-տնտեսական մոդելից, որքան պարզապես արձանագրում էր ուժերի հարաբերակցությունը բոլոր փուլերում:

Առանձնահատուկ նշանակություն է ստանում զարգացման ռազմավարական խնդիրների ձևավորման ինստիտուտի բացակայության գործոնը, նրա գերակայությունը ընթացիկ խնդիրների համեմատ և ռազմավարական խնդիրների իրականացման հսկողությունը:

ժամանակակից աշխարհում այս ֆունկցիան իրականացնում է գործադիր իշխանության բարձրագույն մակարդակը՝ ազգային անվտանգության համակարգը՝ ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) գլխավորությամբ: Այդ ինստիտուտը սկզբունքորեն չէր կարող ձևավորվել Խորհրդային Հայաստանում, քանի որ լիարժեք պետականությամբ տիրապետում էր միայն ամբողջ ԽՍՀՄ-ն, և ոչ թե նրա առանձին սուբյեկտները:

Այդ պատճառով էլ ազգային պետականության ձևավորման առաջին քայլերից մեկը պետք է լիներ ազգային անվտանգության համակարգի վերականգնումը՝ պետականության ընդունված չափանիշներին համապատասխան: Հենց այդ համակարգը պետք է լիներ հասարակական-քաղաքական նոր համակարգի նոդելի մշակման գլխավոր պատվիրատուն:

Ձարգացման ուղղորդող գծի բացակայությունը արտահայտվում է վերարտադրության ցիկլի կապվածության պարամետրերում (մակրոագենտների միջև կապի սերտությունը):

Վերարտադրության ցիկլի կապվածության մակարդակը կառավարման պետական համակարգի համար որոշվում է համակարգային տնտեսական էֆեկտներ ստանալու հնարավորությունը և զարգացման երկարաժամկետ ռազմավարության ձևավորումը:

Դժբախտաբար, այսօր պետք է նկատել ոչ միայն վերարտադրության ցիկլի կապվածության առավել ցածր մակարդակը, այլ որ ավելի կարևոր է՝ նրա առանձին հատվածների (այդ թվում նաև ֆինանսական և իրական հատվածների) հետագա առանձնացման միտումը:

Այլ կերպ ասած, նկատվում է արտաքին հատվածի հետ ազգային վերարտադրության ցիկլի առանձին հատվածների ավելի սերտ կապերի ձևավորման միտում, քան ազգային հատվածների հետ, այսինքն, վերանում է տնտեսության գործունեության համակարգայնությունը:

Մակրոտնտեսական քաղաքականության նպատակ է հանդիսանում հասարակական զարգացման ընտրված նոդելին համապատասխան վերարտադրության ցիկլի կազմակերպումը ու կառավարումը:

Վերարտադրության ցիկլը ամբողջությամբ հանդես է գալիս մի կողմից դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կառավարման միասնական օբյեկտ, մյուս կողմից՝ նրանց համալիր, համակարգային իրականացման մեթոդական հիմք:

Վերարտադրության ցիկլի շրջանակներում հարկային քաղաքականության ֆիսկալ և խթանող նպատակների հաշվեկշռվածությունը ստանում է հաշվարկային հիմնավորում:

Որպեսզի եզրակացություն արվի ազգային հարկային համակարգի խթանող դերի մակարդակի մասին, միանգամայն անբավարար է համեմատել հիմնական հարկերի գծով պաշտոնական հարկային դրույքաչափերը (ԱՏՀ, շահույթ) արտասահմանյանի հետ: Նաև անհրաժեշտ է նախ

համեմատել ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի ցանկը (զարգացած երկրների մեծ մասում այդ սահմանափակումը տարածվում է ներկայացուցչական ծախսերի միայն որոշակի մասի վրա): Երկրորդ՝ հարկերի հաշվառման և հավաքագրման կոնկրետ կազմակերպչական և բյուրոկրատական մեխանիզմները:

Այդ երկու գործոնները ավելացնում են իրական հարկային բեռը 1,5 - 2 անգամ:

Դրան պարտադիր անհրաժեշտ է նաև ավելացնել հետևյալ կարևոր հանգամանքը:

Մասնավոր հատվածի գործունեության իրական ծախսերի (ներառյալ պետական մարմինների կռուսմագվածությունը, գործնական և իրավական տեղեկատվության վրա կատարվող ծախսերը, ֆինանսական ռեսուրսների մատչելիության փաստացի մակարդակը) գործոնային վերլուծությունը և մոնիտորինգը հանդիսանում է պետական ապարատի կենտրոնական և ճյուղային կառույցների կարևորագույն խնդիրներից մեկը:

Կան բավարար հիմքեր ենթադրելու, որ ձեռներեցների եկամուտների վրա իրական բեռը մի քանի անգամ գերազանցում է զարգացող երկրների համար թույլատրելի մակարդակը:

Այդ պայմաններում իրականում գոյատևել կարող են միայն պետական մարմինների հովանավորության տակ գտնվող ձեռնարկությունները: Բայց դա նշանակում է իրական ֆիսկալ բեռի փոխադրում մնացած ձեռներեցների ուսերի վրա, որոնք չունեն բավարար հզոր հովանավորներ: Արդյունքում ձևավորվում է ստվերային տնտեսության հարկադրական աճի կայուն միտում, որի մասին վկայում է ՀՆԱ-ին հարկային եկամուտների հարաբերության ցուցանիշի աճի կայուն միտման բացակայությունը:

Վերոհիշյալ բոլոր բացասական դիտողությունները, որոնք բացահայտում են չարվածը (չատն էլ անհնարին էր անել օբյեկտիվ պատճառներով), անհրաժեշտ է քննարկել երկու տեսակետից:

Առաջինը և հստակ խոսում է բաց թողնված հնարավորությունների մասին, այսինքն ունի վառ արտահայտված (-) նշան:

Երկրորդը պահանջում է իրավիճակը դիտարկել սիներգետիկայի տեսանկյունից: Այդ դիրքից սխալների խորությունն ու համակարգայնությունը համապատասխանաբար խորացրել և արագացրել են մոտեցումը բիֆուրկացիոն կետին՝ որակապես նոր իրավիճակին անցնելու հնարավոր



րությանը:

Որպես համանմանություն կարելի է բերել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված իրավիճակը, երբ ճապոնիայում ամերիկյան զավթողական ուժերի քաղաքականությունն ուղղված էր որպես տնտեսապես թույլ երկրի նրա պահպանմանը:

Այսօր ըստ որոշ փորձագետների, այդ քաղաքականությունը մոտեցրեց այն ժամանակվա ճապոնիային բիֆուրկացիայի կետին, այսինքն անհրաժեշտ պայմաններ ստեղծեց արագ զարգացման համար («հրաշք»): ճապոնական ազգի ընտրախավը կարողացավ օգտագործել ընձեռնված հնարավորությունը:

Ներկայումս Հայաստանը կամ արդեն գտնվում է բիֆուրկացիայի կետում, կամ էլ արագորեն մոտենում է դրան: Այդ հանգամանքը կատարված սխալների և զարգացման ուղղության գիտակցման հետ մեկտեղ անկասկած դրական (+) երևույթ է:

Մնում է գլխավորը՝ բաց չթողնել առաջ նետվելու օբյեկտիվորեն ստեղծված պատմական հնարավորությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>I. Համաշխարհային հասարակական-քաղաքական և տնտեսական միտումների համառոտ նկարագիր</b> .....	3
1. Անհատի և հասարակական շահերի ներդաշնակեցումը որպես հասարակական-քաղաքական համակարգերի դինամիկան որոշող հիմնական միտում .....	3
2. Հասարակական կոնսենսուսի ձևավորման ինստիտուտների հաստատումն զարգացումը .....	5
3. Ինստիտուցիոնալ մակարդակի վրա ազգային զարգացման կառավարման համակարգում ռազմավարական սկզբունքի արագացումը .....	7
4. Ապագա հասարակության հոգևոր-մոդելի վրա հիմնված հասարակության մոդելը .....	8
5. Համահարթեցում .....	12
<b>II. Հասարակության զարգացման (հասարակության ինքնակազմակերպման) գործընթացն ապահովող ինստիտուտների համակարգերի լիակատարությունը (ինքնապարփակությունը)</b> .....	16
<b>III. Ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգը</b> .....	21
1. Գաղափարախոսական (հոգևոր, հոգեբանական) անվտանգությունը որպես զարգացման որակն ապահովող կարևոր պայման .....	22
2. Տնտեսական անվտանգություն (SU) .....	28
2.1 Տնտեսության ապագա կառուցվածքի հիմնական հատկանիշները .....	28
2.2 Պետական տնտեսական քաղաքականությունը .....	31
2.3 Տնտեսական անվտանգության ինստիտուցիոնալ տեսանկյունները (հատույթները) .....	33
2.4 Տնտեսական անվտանգության նորմատիվային չափորոշիչները ....	38
<b>IV. Անկախության պահից անցած ճանապարհի քննադատական վերլուծությունը</b> .....	42

## «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, Գապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեոֆունդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

### ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

**ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

**բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

**գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

**դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում
- բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Սարգսյան** - ՀՀ Վարչապետ

**Մանուկ Թովուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

**Լևոն Մկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: [noravank@arminco.com](mailto:noravank@arminco.com)